ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուսուցչի օգնականների համար



ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՁԵՌՆԱՐԿ

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՁԵՌՆԱՐԿ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուսուցչի օգնականների համար

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

Երևան – 2021

«Ուսուցչի օգնականի ձեռնարկ» մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն., 2021. - 94 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես ուսումնական նյութ

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Սվաջյան Ա.Հ.

Գրախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Ազատյան Թ.Յու.
մ.գ.դ., պրոֆեսոր Ազարյան Ռ.Ն

Հեղինակներ՝ Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա., Մարգարյան Լ.Հ., Հակոբյան Լ.Գ., Գրիգորյան Լ.Կ., Մուրադյան Ռ.Մ., Հարությունյան Գ.Հ., Զաքարյան Լ.Կ., Ներսիսյան Ա.Ռ., Քալաշյան Ա.Ա.

Խմբագիր՝ Պապյան Մ.Ռ.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. 4

ՄԱՍ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈԴԵԼՆԵՐԸ 8

Ուսուցչի օգնականի աշխատանքի մոդելներն այլ երկրներում..... 9

Ուսուցչի օգնականի աշխատանքի մոդելը Հայաստանում.....13

ՄԱՍ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

- ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ 19
  - I. Աջակցություն սովորողների ուսումնառությանը.....21
  - II. Աջակցություն սովորողների վարքագծի կառավարմանը 30
  - III. Աջակցություն այն սովորողներին, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք.....38
- ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ 53
  - I. Դասարանի օգնական.....58
  - II. Համատեղ դասավանդող 60
  - III. Դասընթացի պլանավորման մասնակից 65
- ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԵՎ ԴՊՐՈՑԻՆ 68
  - I. Աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը 68
  - II. Աջակցություն դպրոցին.....70

ՄԱՍ 3. ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ 72

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....81

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 90

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երբեք մի կասկածեք, որ իրենց գործին նվիրված մարդկանց մի փոքր խումբ կարող է փոխել աշխարհը»

Մարգարեթ Միդ

Հայաստանի Հանրապետությունը 2014 թվականին համընդհանուր ներառական կրթությունը հռչակեց որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք՝ հիմքում ունենալով մի շարք միջազգային փաստաթղթերով ՀՀ կողմից ստանձնած, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված պարտավորությունները, ինչպես նաև՝ ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն):

Կրթության ոլորտում իրականացվող այս բարեփոխումները ենթադրում էին ինչպես ուսուցման գործընթացում աշակերտներին գիտելիքների տրամադրման, այնպես էլ կրթության գործընթացում կիրառվող մեթոդների և ռազմավարությունների վերանայում, վերակառուցում և արմատական փոփոխություններ: Ուսուցման գործընթացն անհրաժեշտ էր հարստացնել դասավանդման ճկուն և բազմազան մեթոդներով, միևնույն ժամանակ՝ կատարել ուսումնական գործընթացի և միջավայրի հարմարեցում: Այս ամենի լավագույնս իրականացման համար հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչին անհրաժեշտ էր լրացուցիչ աջակցություն, ինչի համար էլ հանրակրթության մեջ ներդրվեց նոր՝ «ուսուցչի օգնական» հաստիքը (Զադոյան, 2016):

Ուսուցչի օգնականներին ճիշտ չի դիտարկել որպես հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա «լրացուցիչ» մանկավարժական աշխատողներ: Նրանք կարևոր դերակատարում ունեն սովորողների ուսուցման, դաստիարակության, նրանց ինքնակառավարման, անկախության և ինքնագիտակցության տարրերի ձևավորման գործընթացներում:

Ստեղծելով համագործակցության արդյունավետ մեխանիզմներ՝ ուսուցչի օգնականը և ուսուցիչը համատեղ ջանքերով հնարավորություն ունեն ապահովելու մատչելի, հասանելի և արդյունավետ կրթական գործընթաց յուրաքանչյուր դպրոցում՝ յուրաքանչյուր երեխայի համար:

Շուրջ 5 տարի ՀՀ-ում մարզ առ մարզ ներդրվում է ուսուցչի օգնականի հաստիքը, սակայն, կրթության մեջ ներգրավված բոլոր կողմերից՝ դպրոցների ղեկավարներից, ուսուցիչներից, ծնողներից և սովորողներից հավաքագրված տեղեկատվությունը վկայում է այն մասին, որ հաճախ այս բոլոր կողմերն այնքան էլ

լավ չեն պատկերացնում ուսուցչի օգնականի դերը, պարտականությունները և համագործակցության ճանապարհները բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Սույն ձեռնարկն ուղղված է ուսուցչի օգնականի պարտականությունների և անելիքների հստակեցմանը, ինչպես նաև՝ ուսուցիչների հետ համագործակցության ձևերի նկարագրությանը: Այն հավասարապես կիրառելի է թե' դպրոցի ղեկավար կազմի և թե' մանկավարժական կազմի համար, այն կարող է նպաստել առավել համագործակցված աշխատանքների իրականացմանը, մասնակցային ու որակյալ կրթության տրամադրմանը:

Սույն ձեռնարկը նախատեսված է ուսուցչի օգնականների, ուսուցիչների, կրթության մասնագետների և կրթության հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

Ձեռնարկը բաղկացած է 3 մասից: Առաջին մասում ներկայացվում են ուսուցչի օգնականի աշխատանքի մոդելները՝ նրա առջև դրված պահանջները և պարտականություններն ինչպես այլ երկրներում, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետությունում: Երկրորդ մասում ներկայացվում է ուսուցչի օգնականի գործունեության հիմնական բովանդակությունը և իրականացվող աշխատանքների ուղղությունները՝ որպես հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի: Երրորդ մասում ներկայացվում է ուսուցչի օգնականի և կրթական գործընթացին մասնակից բոլոր օղակների միջև համագործակցության կարևորությունը, համատեղ իրականացվող աշխատանքները, որոնք միտված են ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացմանը:

Սիրելի՛ ուսուցչի օգնականներ,
ձեր պատասխանատու աշխատանքի արդյունքը երեխաների հաջողություններն են դպրոցում և կյանքում:
Այս ձեռնարկի միջոցով մենք ցանկանում ենք կիսել այդ գործընթացում ձեր ունեցած պատասխանատվությունը՝ բարձրացնելով իրականացվող աշխատանքի որակն ու արդյունավետությունը:

Դուք կարող եք վստահ լինել, որ ձեր ստեղծագործ ճամփորդության յուրաքանչյուր անցակետում մեր կողմից կստանաք հաջողության հասնելու համար անհրաժեշտ գիտելիքներով լի ճամպրուկ:
Դե ինչ, գնացինք...

ՄԱՍ 1.

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈԴԵԼՆԵՐԸ

ԽՈՐՀՈՒՐԴ 1

Համագործակցեք կրթական գործընթացի մասնակից բոլոր օղակների՝ ծնողների, երեխաների, ուսուցիչների, մասնագետների և հաստատության վարչական աշխատողների հետ, կանխորոշեք ձեր անելիքները յուրաքանչյուր օղակի հետ սովորողի կարիքներին համապատասխան արձագանքելու համար:

Ուսուցչի օգնականի աշխատանքի մոդելներն այլ երկրներում

Ուսուցչի օգնականը հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատող է, ով աջակցություն է ցուցաբերում դասավանդող ուսուցչին՝ հնարավորություն ընդձեռելով նրան առավել արդյունավետ դասեր անցկացնել և ավելի մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության և մասնակցության վրա: Ուսուցչի օգնականը համագործակցում և համաձայնեցնում է իր անելիքները դասավանդող ուսուցչի հետ, օգնում է նրան դասերը սահուն վարելու գործընթացում՝ պահպանելով դասավանդող ուսուցչի կողմից դասարանի համար սահմանված ընդհանուր պահանջները (Giangreco, Doyle, 2007):

Ուսուցչի օգնականի առջև դրված պահանջները տարբեր երկրներում տարբեր են: Մի շարք երկրներում ուսուցչի օգնականը պետք է ունենա առնվազն, միջին մասնագիտական կրթություն, սակայն, կան նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադան, Ֆինլանդիան, Լիտվան և Լատվիան, որտեղ ուսուցչի օգնական լինելու համար բավարար է միջնակարգ կրթություն ունենալը: Անգլիայում և Շոտլանդիայում ուսուցչի օգնականի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է միայն գրագիտության և թվաբանության հիմնական հմտություններ ու երեխաների հետ աշխատելու փորձ ունենալ: Շվեյցարիայում ուսուցչի օգնական կարող են աշխատել տարբեր համալսարանների ուսանողները կամ բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող մասնագետները: Նրանք իրավունք ունեն նաև համատեղ դասավանդում իրականացնել ուսուցիչների հետ: Շատ երկրներ պահանջում են, որ ուսուցչի օգնականներն ունենան «Առաջին օգնություն» թեմայով վերապատրաստման դասընթացների մասնակցության հավաստագիր (Giangreco, Doyle, 2007, Takala, 2007, Nova Scotia, 2009):

Հարկ է նշել, որ բացի վերը նշված պահանջներից, բոլոր երկրներում կարևորվում են նաև ուսուցչի օգնականի անձնային որակները՝ համբերատարությունը, աշակերտների հանդեպ անկեղծ հոգատարությունը: Նա պետք է լինի ճկուն, կարողանա տարբերակել սովորողների կրթական կարիքները ուսուցման գործընթացում սովորողներին անմիջականորեն աջակցելու

համար: Քանի որ ուսուցչի օգնականներն աջակցում են ուսուցիչներին դասերի պլանավորման, սարքավորումների տեղադրման, նյութերի պատրաստման և տրամադրման գործընթացում, կարևոր է և անհրաժեշտ, որպեսզի նրանք ծանոթ լինեն նաև կրթության պետական չափորոշիչների բովանդակությանը (Giangreco, Doyle, 2007):

Որքան տարբեր են ուսուցչի օգնականի մասնագիտական որակավորման նկատմամբ պահանջները, այնքան էլ տարբեր են նրանց պաշտոնային պարտականությունները: Նրանք կարող են աշխատել ինչպես սովորողների կոնկրետ խմբի, այնպես էլ՝ բոլորի հետ: Օրինակ՝ Հայաստանում, Շվեդիայում, Իսլանդիայում, Ֆինլանդիայում ուսուցչի օգնականը կարող է աջակցություն տրամադրել բոլոր՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿ) ունեցող սովորողներին, իսկ Գերմանիայում, Կանադայում, ԱՄՆ-ում ուսուցչի օգնականը աջակցում է հիմնականում ԿԱՊԿ ունեցող սովորողներին (Giangreco, Doyle, 2007):

Որոշ երկրներում ուսուցչի օգնականներից պահանջվում է օգնել աշակերտներին ինքնասպասարկման ոլորտի դժվարությունները հաղթահարելիս, օրինակ՝ ուտել, փոխել մարզահագուստը, հետևել անձնական հիգիենային: Ավագ դասարանում սովորող և ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ ուսուցչի օգնականը կարող է իրականացնել այնպիսի հմտությունների ձևավորման շուրջ աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են դպրոցն ավարտելուց հետո աշխատանք գտնելու համար (Տիքա և ուրիշներ, 2018):

Թեև ուսուցչի օգնականի կողմից իրականացվող աշխատանքները բազմաբնույթ են, այնուամենայնիվ, ունեն շատ ընդհանրություններ, և յուրաքանչյուր երկրում դրանք ամրագրված են նրա պաշտոնային պարտականություններում: Պայմանականորեն այդ աշխատանքները կարելի է խմբավորել 3 բնագավառներում՝ ուսուցման գործընթաց, անվտանգություն և խնամք: Նշված բնագավառների շուրջ իրականացվող միջամտությունները խմբավորված ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. *Ուսուցչի օգնականի գործառույթներն այլ երկրներում*

Ուսուցման գործընթաց	Անվտանգության պահպանմանն ուղղված աշխատանքներ	Խնամքին ուղղված աշխատանքներ
• Աջակցել ուսուցիչներին ստուգելու և գնահատելու տնային հանձնարարությունները, աշխատանքային թերթիկները կամ թեստային աշխատանքները: • Աջակցել ուսուցչին անհրաժեշտ փաստաթղթերի վարման գործընթացում, օրինակ՝ սովորողների բացակայությունների, գնահատականների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում: • Անհրաժեշտության դեպքում՝ դասարանն ապահովել այլընտրանքային ուսուցման միջոցներով, սարքավորումներով, հետևել, որ դրանք լինեն սարքին ու վերաբերեն օրվա թեմային (համակարգիչ, աուդիոգրքեր, նկարներ և այլն): • Մասնակցել անհատական	• Հետևել և ուղեկցել սովորողներին դասամիջոցների ընթացքում: • Ուղեկցել և վերահսկել սովորողներին պարապմունքների, լաբորատոր աշխատանքների, ռեսուրս սենյակների և/կամ էքսկուրսիաների ընթացքում: • Պաշտպանել յուրաքանչյուր սովորողի շահերը և իրավունքները: • Աջակցել սովորողներին դպրոցի կանոնակարգի պահպանման հարցում: • Պահպանել յուրաքանչյուր սովորողի բժշկական փաստաթղթերի, ԱՈՒՊ-ի և գնահատականների վերաբերյալ անձնական	• Աջակցել սովորողներին առօրյա-կենցաղային գործողություններ կատարելիս (օրինակ՝ սանհանգույցից օգտվելիս, հագնվելիս, ուտելիս, հիգիենային հետևելիս): • Անհրաժեշտության դեպքում՝ սովորողներին հիշեցնել դեղորայքի ընդունման մասին: • Հետաքրքրվել երեխաների սոցիալական և առողջական կյանքով: • Աջակցել ֆիզիկական կամ շարժողական դժվարություններ ունեցող սովորողներին ըստ անհատական ուսուցման պլանում ամրագրված ցուցումների և առաջարկությունների (օրինակ՝ տեղաշարժվել, մարնի դիրքը փոփոխել):

ուսուցման պլանի (ԱՈՒՊ) կազմմանը, աջակցել համապատասխան աշխատանքների արդյունավետ իրականացման գործընթացին: • Մշտադիտարկել և գնահատել սովորողների աշխատանքը և առաջընթացը, տեղեկություն հավաքագրել անհատական ոսուցման պլանի արդյունավետության վերաբերյալ: • Աջակցել սովորողներին հաղթահարելու ուսումնառության ընթացքում լեզվական, մշակութային, սոցիալական և այլ դժվարությունները: • Ուղղորդել կամ աջակցել նաև այնպիսի առարկաների դասաժամերին, ինչպիսիք են՝ երգը, պարը, դպրոցում առկա արվեստի այլ խմբակները: • Աջակցել սովորողին կատարելու դասարանական առաջադրանքները,զարգացնել սովորողների ինքնուրույն ուսանելու հմտությունները:	տվյալների գաղտնիությունը: • Հարթել շահերի բախման հետևանքով առաջացած կոնֆլիկտները: • Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ապահովել անվտանգ և հարմարավետ միջավայր):	• Կարգավորել աջակցող տեխնոլոգիաները՝ ապահով և արդյունավետ կիրառման համար (օրինակ՝ տեխնիկական սարքեր, լսողական սարքեր և այլն):

Ուսուցչի օգնականի աշխատանքի մոդելը Հայաստանում

ՀՀ կրթական համակարգում ուսուցչի օգնականներն իրենց գործունեությունը սկսել են ծավալել 2014 թվականից, սակայն, նրանց մասնագիտական որակավորման և իրականացվող գործառույթների, փաստացի պահանջվող աշխատանքների և իրական հնարավորությունների միջևդեռևս առկա են թյուրըմբռնումներ և հակասություններ (Զադոյան, 2016):

ՀՀ-ում «ուսուցչի օգնական» հասկացությունը մեկնաբանվում է որպես կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող[1]: ՀՀ կառավարության N 1391-Ն որոշման համաձայն, որպես ուսուցչի օգնական կարող է աշխատել բարձրագույն մանկավարժական կրթություն կամ բարձրագույն կրթություն, և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, առնվազն, երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձն այն դեպքում, երբ տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում չի զբաղեցնում ուսուցչի պաշտոն[2]:

Եթե ես ուսուցչի օգնական եմ, ապա պետք է ունենամ գիտելիքներ կրթական ծրագրերի (հանրակրթական պետական չափորոշիչ և առարկայական ծրագրեր), կրթական գործընթացը կարգավորող իրավական ակտերի (օրենքներ, կարգեր, կանոնադրություն, ներքին իրավական ակտեր և կարգապահական կանոններ, իրավունքներ և պարտականություններ), այլընտրանքային հաղորդակցման մեթոդների, սարքավորումների, աջակցող սարքերի կիրառելիության, անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնների վերաբերյալ:

Ակնհայտ է, սակայն, որ միայն կրթությամբ մանկավարժ լինելը բավարար չէ ուսուցչի օգնականի պաշտոնը ստանձնելու համար: Լավագույն ուսուցչի օգնականը պետք է ունենա անձնային և մասնագիտական այնպիսի որակներ, որոնք

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն)

[2] «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1391-Ն

հնարավորություն կտան նրան առավել արդյունավետ իրականացնել իր աշխատանքային գործունեությունը:

Եթե ես ուսուցչի օգնական եմ, ապա պետք է լինեմ հոգատար, արդարամիտ, հանդուրժող, համբերատար, ճկուն, ստեղծագործ և նախաձեռնող: Պետք է ունենամ կազմակերպչական ունակություն-ներ, վստահություն ձևավորելու, փոփոխվող իրավիճակներում արագ կողմնորոշվելու և համապատասխան որոշումներ կայացնելու, թիմում արդյունավետ հարաբերություններ հաստատելու ու համագործակցելու կարողություն:

Ինչպես այլ երկրները, Հայաստանը ևս ուսուցչի օգնականի համար ունի հստակ սահմանված և ՀՀ կառավարության կողմից հաստատված պաշտոնի նկարագիր[3] (հավելված 1): Ըստ այդմ, ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականը, ուսուցիչների հետ համագործակցելով, իրականացնում է սովորողների կատարողականության դիտարկում և, այս կամ այն պատճառով առաջացած դժվարությունների վերհանում: Հիմք ընդունելով հավաքագրված տեղեկատվությունը՝ ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին.

- դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:
- Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:
- Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը:

[3] «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1391-Ն

- Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:
- Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Վերլուծելով ՀՀ կառավարության որոշմամբ ուսուցչի օգնականի համար սահմանված պաշտոնային պարտականությունները՝ հասկանալի է դառնում, որ նրա կողմից իրականացվող աշխատանքների ծավալը բավականին մեծ է: Արդյունքում, ունենալով նույնիսկ պահանջվող որակավորումները, համապատասխան փորձառություն և մեծ պատարաստակամություն, միևնույն է՝ ուսուցչի օգնականները դժվարություններ են ունենում նման ծավալով աշխատանքների իրականացման ընթացքում (Զադոյան, 2016):

Արդյունավետ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար կարևոր է ուսուցչի օգնականի մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված դասընթացներին պարբերական մասնակցությունը, նրա գործունեությունը նկարագրող մեթոդական ուղեցույցների և ձեռնարկների առկայությունը: Այս ամենը հնարավորություն կտա ուսուցչի օգնականին ավելի հստակ պատկերացում ունենալ իր գործառույթների մասին, և իրականացվող աշխատանքներն ուղղել ի նպաստ սովորողների որակյալ կրթության իրավունքի իրացմանը:

Երկրները, դպրոցները, երեխաները, ուսուցիչները և ուսուցչի օգնականները բազմազան են, տարբերվում են իրենց առջև դրված պահանջներով, ծագած խնդիրներով, մարտահրավերներով: Այդ իսկ պատճառով գոյություն չունի և չի կարող ունենալ ուսուցչի օգնականի գործառույթների համընդհանուր մոդել:

ՄԱՍ 2.

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՐՀՈՒՐԴ 2

Ձգտեք աջակցել սովորողներին և ուսուցիչներին ուսումնական գործունեության բոլոր ձևերի՝ դասերի, դասամիջոցների, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականի՝ որպես մանկավարժական աշխատողի, հիմնական դերն է իր գործունեությամբ խթանել յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը կրթական գործընթացին՝ դրանով իսկ նպաստելով տվյալ հաստատությունում լավագույն ներառական կրթական համակարգի կայացմանը: Նրա կողմից իրականացված աշխատանքները կարող են որոշիչ լինել սովորողի ուսումնառության գործընթացում՝ ինքուրույն սովորելու կարողության ձևավորման և զարգացման, ուսումնական նյութի յուրացման, դպրոցում և դասարանում ներառման գործընթացում: Հանդիսանալով ուսումնական հաստատությունում կարևոր դերակատարում ունեցող մանկավարժական աշխատող՝ նա աջակցում և լրացնում է ուսուցչին սովորողների որակյալ կրթության ապահովման գործընթացում ինչպես դասարանում, այնպես էլ արտադասարանական միջոցառումների ընթացքում, խթանում է սովորողների կրթական և սոցիալական զարգացումը (Giangreco, Doyle, 2007):

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների որակյալ ուսուցման և աջակցության տրամադրման համար պատասխանատու են դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմը և ծնողները: Ուսուցչի օգնականները, լինելով մանկավարժահոգեբանական աջակցության թիմի լիարժեք անդամներ, պետք է մասնակցեն բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հետևողական լինեն յուրաքանչյուր սովորողի ԱՈՒՊ-ի շրջանակներում սահմանված նպատակների իրագործմանը (Nova Scotia, 2009):

Չնայած նրան, որ ուսուցչի օգնականներն իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են հաստատված պաշտոնային պարտականությունների և ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի տարեկան ծրագրին (հավելված 2) համապատասխան, այնուամենայնիվ, նրանց առջև դրված պահանջները կարող են որոշակիորեն տարբերվել՝ կախված տվյալ ուսումնական հաստատության ուսուցիչների, ինչպես նաև սովորողների պահանջներից և կարիքներից (ֆիզիկական միջավայր, գույք, կրթության կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքային նյութեր, մեթոդական ռեսուրսներ և այլն), որն էլ իր հերթին արտացոլվում է ուսուցչի օգնականի տարեկան պլանում (հավելված 3):

Ընդհանուր առմամբ, ուսուցչի օգնականներն իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնում են 3 հիմնական ուղղություններով՝

- աջակցություն սովորողներին,
- աջակցություն ուսուցիչներին,
- աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը և դպրոցին:

➤ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴ 3

Տեղեկացված եղեք սովորողների առանձնահատկություններից և անհատական կարողություններից՝ արդյունավետ և համապատասխան աջակցություն տրամադրելու համար:

Ուսուցչի օգնականներն առանցքային դեր ունեն սովորողների ուսումնական գործընթացում և կյանքում: Նրանք աջակցում են սովորողներին՝ հաղթահարելու ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները: Ուսուցչի օգնականը կարող է կապող օղակ հանդիսանալ երեխայի և նոր միջավայրի միջև՝ օգնելով նրան հարմարվել նոր միջավայրին՝ նրա շուրջ կառուցելով հարմարավետ կրթական միջավայր, ձևավորելով համագործակցային հարաբերություններ ինչպես սովորողի և հասակակիցների, այնպես էլ՝ սովորողի և ուսումնական գործընթացի այլ մասնակիցների միջև: Այս պարագայում ուսուցչի օգնականի համար ամենակարևոր գործոններից մեկն է տեղեկացված լինել սովորողի առողջական խնդիրների, զարգացման առանձնահատկությունների և հնարավորությունների, ուսումնական դժվարությունների և ձեռքբերումների մասին, քանի որ նրա գործունեության արդյունավետությունը կախված է դրանից (Nova Scotia, 2009):

Ուսումնական հաստատությունում բոլոր սովորողների որակյալ և անվտանգ ուսուցումն ապահովելու համար անհրաժեշտ են ուսուցչի օգնականի «լրացուցիչ ձեռքերը և աչքերը»: Նրանք աջակցում են այն սովորողներին, ովքեր ունեն անհասկանալի հարցեր, խրախուսման կարիք կամ օգնություն են փնտրում հանձնարարված առաջադրանքները կատարելիս, ինչպես նաև օգնում են սովորողներին ինքնուրույն սովորելու կարողություններ, հմտություններ ձեռք բերել և դառնալ հասարակության լիիրավ անդամ: Իրենց աշխատանքներն ուսուցչի օգնականները կարող են իրականացնել ամբողջ դասարանի հետ, փոքր խմբերով, անհատական, դասապրոցեսի ընթացքում կամ դրանից



դուրս (Sharples, Webster, Blatchford; 2015, Basso, McCoy 2007):

Ուսուցչի օգնականի աջակցությունը սովորողներին իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- աջակցություն սովորողների ուսումնառությանը,
- աջակցություն վարքագծի կառավարմանը,
- աջակցություն սովորողներին, ովքեր ունեն ԿԱՊԿ:

ՀԻՇԵ՛Ք.

Ցանկացած օգնություն պետք է լինի չափավոր, միտում չունենա ամեն ինչ երեխայի փոխարեն անելու, այլ ընդհակառակը՝ նպաստի նրա նոր հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, դրանք նոր և տարբեր իրավիճակներում կիրառելուն՝ աստիճանաբար նվազագույնի հասցնելով աջակցությունը և խթանելով ինքնուրույնությունը:

I. Աջակցություն սովորողների ուսումնառությանը

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի գործունեությունն իր մեջ ներառում է առաջադրանքների ահռելի շրջանակ, որի հիմնական նպատակը սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան գիտելիքների յուրացման և ուսուցման բարձր որակի ապահովումն է: Երբեմն ուսուցիչը կարող է դժվարանալ սովորողներին իրենց կարողություններին համապատասխան առաջադրանքներով ապահովելու և անհատական մոտեցում ցուցաբերելու գործընթացում: Հաճախ առաջադրանքները կատարելու համար, սովորողներին անհրաժեշտ է լրացուցիչ փորձառություն, ժամանակ կամ որոշակի աջակցություն: Այստեղ կարևորվում է ուսուցչի օգնականի դերը՝ որպես սովորողների ուսումնառության գործընթացի աջակից: Սովորողների ուսումնառության ընթացքում ուսուցչի օգնականի կողմից իրականացվող բոլոր գործողությունները միտված են կրթական գործընթացում նրանց ակտիվ մասնակցության ապահովմանը, ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, սովորողների հնարավորություններին համապատասխան գիտելիքների յուրացմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Աջակցելով սովորողների ուսումնառությանը՝ ուսուցչի օգնականը.

- պլանավորում է իր աշխատանքները, կատարում գրանցումներ, պատրաստում անհրաժեշտ օժանդակ նյութերը և կազմակերպում դասարանը:
- Հետևում և աջակցում է սովորողներին՝ ապահովելու նրանց անվտանգությունն ու ուսման հասանելիությունը:
- Նպաստում է բոլոր սովորողների ներառմանը, ուսումնառության ընթացքում նրանց ակտիվության և մասնակցության բարձրացմանը:
- Խրախուսում է սովորողներին գործել ինքնուրույն և անկախ, աջակցում ուսուցչի կողմից պահանջված հանձնարարությունների կատարմանը:
- Հետադարձ կապ է տալիս սովորողներին իրենց առաջադիմության և նվաճումների վերաբերյալ:
- Իր գիտելիքներն ու մասնագիտական հմտությունները կիրառում է սովորողներին աջակցելու և ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու համար:

- Անհատական ուշադրություն է ցուցաբերում այն սովորողներին, ովքեր ժամանակ առ ժամանակ լրացուցիչ աջակցության կարիք ունեն:
- Տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում սովորողներին մասնագիտական կողմնորոշման և ինքնուրույն ընտրություն կատարելու գործընթացում:
- Ըստ անհրաժեշտության՝ առաջնորդում է դասարանում առկա փոքր խմբերին:
- Առաջարկում և կիրառում է անհրաժեշտ սարքավորումներ, տեխնոլոգիաներ, մեթոդներ և հնարներ՝ սովորողների կարիքներին համապատասխան:
- Աջակցում է սովորողներին մասնակցելու ուսումնական առաջադրանքներին և միջոցառումներին:
- Կազմակերպում է անհատական աշխատանք՝ սովորողի կարողություններին ու կարիքներին համապատասխան:
- Խթանում է սոցիալական և կենցաղային հմտությունների ձեռքբերումը (Hadwin, Wilcox, 2000; Nova Scotia, 2009):

Սովորողները և ուսումնառության համընդհանուր ձևավորումը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր երեխաներն առանձնահատուկ են, կրթությունը պետք է կազմակերպել՝ հիմքում ընդունելով բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքը: Սա հնարավոր է կազմակերպել ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքների ու մոտեցումների կիրառմամբ՝ ապահովելով սովորողների ուսուցման գործընթացին ակտիվ մասնակցության բազմազան միջոցներ (Տիքա և ուրիշներ, 2018, Սվաջյան և ուրիշներ, 2020):

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը մարդու սովորելու կարողության գիտական հիմքերի վրա կազմված գործիք է, որը հնարավորություն է տալիս կատարելագործել և առավելագույնս հասանելի դարձնել ուսուցման գործընթացը բոլորի համար:

Ուսուցման գործընթացում պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն տրամադրված նյութի քանակին, ընկալման մակարդակին, այլև՝ մատուցման

տարբերակներին: Բոլոր երեխաները, առանց բացառության, կարող են սովորել, սակայն, նյութն առավել հեշտ ընկալելու և սովորելու նրանց ոճերը տարբեր են: Որոշ երեխաներ հեշտությամբ սովորում են ուսուցչին ունկնդրելով, իսկ մյուսները կարող են նախընտրել ինչ-որ գործողություն կատարել, ոմանց համար էլ կարևոր են տեսողական միջոցների առկայությունը, խմբային քննարկումները և այլն: Երեխաների ուսումնառության այս տարբեր ոճերի հիմքում ընկած է նրանց փոխազդեցությունը իրենց հաղորդվող տեղեկատվությանը (Гарднер, 2007):

Ուսուցման գործընթացն իրականացնելուց առաջ պետք է հստակ պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության, ինչպես նաև դասավանդման ոճերի մասին, և դասարանի աշխատանքային տարածքը նախապես կազմակերպել՝ համապատասխանեցնելով այդ ամենին: Դա հնարավորություն կտա ուսուցչին, ուսուցչի օգնականին և սովորողներին ակտիվ և արդյունավետ փոխազդել դասաժամի ընթացքում (Տիքա և ուրիշներ, 2018):

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ներառում է մի շարք կոնկրետ առաջարկներ, որոնք հնարավոր է կիրառել ցանկացած ոլորտի և համակարգի համար՝ բարձրացնելով սովորողի գործունեության և մասնակցության մակարդակը (աղյուսակ 2):

Ուսումնառության համընդհանուր ձևավորումն ունի 3 հիմնական սկզբունք՝

1. **Ճանաչողական** ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ - Ուսուցանվող նյութը պետք է մատուցվի ավելի քան մեկ տարբերակով (օրինակ՝ գրավոր, ձայնային, տեսաձայնային և այլն), ինչը հնարավորություն կտա սովորողին նյութն ուսումնասիրել իր ուժեղ կողմերից բխող և իրեն հասանելի տարբերակներով:
2. **Ռազմավարական** ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ - Ուսումնառության համընդհանուր ձևավորումը սովորողին հնարավորություն է տալիս նաև ընտրել գիտելիքների ստուգման իրեն հարմար տարբերակը (օրինակ՝ բանավոր, գրավոր, նախագծային աշխատանք և այլն):
3. **Հուզական** ուսուցման օժանդակում՝ բազմաթիվ միջոցների կիրառմամբ - Ուսումնառության համընդհանուր ձևավորման դեպքում ուսուցիչներն ազատ են սովորողներին մոտիվացնելու տարբերակների ընտրության հարցում (հանձնարարությունների ընտրության հնարավորություն, հմտությունների ձևավորում՝ հիմնվելով խաղային գործունեության վրա, դասարանում

կանգնելու կամ քայլելու հնարավորության ընձեռում և այլն) (Սվաջյան և ուրիշներ, 2020, Տիքա և ուրիշներ, 2018):

Աղյուսակ 2. *Ուսումնառության համընդհանուր ձևավորման օրինակներ*

Նյութի մատուցման միջոցներ	Արտահայտվելու միջոցներ	Ներգրավման միջոցներ
• Օգտագործեք համակարգիչ, սահիկաշար: • Մատուցեք նյութը թատրոնի, դերախաղի միջոցով: • Կիրառեք առարկայական ներկայացումներ (օրինակ՝ լեգոներ, խորանարդիկներ, մոդելներ): • Օգտագործեք վանկային, տառային աղյուսակներ, ինտելեկտուալ, զարգացնող բառախաղեր՝ անագրամմաներ (մի բառի տառերն օգտագործելով՝ կազմել այլ բառեր), ռեբուսներ, կախարդական շղթա (գտնել բառի ասոցիատիվ զույգը, օրինակ՝ հիվանդություն - կարմիր խաչ, կով - կաթ, դրոշ - երկիր), բառային լաբիրինթոս (խառը դասավորության տառերից կազմել բառեր), բառային մատրյոշկաներ (երկար բառից կազմել կարճ բառեր և	• Խթանեք գործողություններով արտահայտվելու այլընտրանքները, օրինակ՝ ժեստ, մատնախոսություն, մնջախաղ և այլն: • Խրախուսեք նյութի այլընտրանքային ներկայացումը դասարանին, օրինակ՝ դերախաղ: • Ապահովեք աջակցող տեխնոլոգիաների և սարքավորումների հասանելիությունը: • Խթանեք տոկունությունն ու ճկունությունը: • Առաջարկեք սովորողներին դասը պատմելիս կամ ստեղծագործական առաջադրանքներ կատարարելիս օգտագործել պլան, բանալի բառեր, դեպքերի հաջորդականությունը ներկայացնող սխեմաներ: • Խրախուսեք համագործակցությունն ու հաղորդակցությունը՝	• Առաջարկեք սովորողին վերլուծել, թե ինչն է իրեն օգնում մտապահելու փաստերն ու իրադարձությունները և գտնել սովորելու ամենարդյունավետ ճանապարհը: • Առաջարկեք սովորողին վերլուծել և հասկանալ, թե ուսուցման որ ռազմավարություններն են կիրառելի և արդյունավետ իր համար: • Զարգացրեք դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները: • Կիրառեք փոխադարձ գնահատման մեթոդը: • Խթանեք ընտրություն կատարելը: • Սովորողներին ընձեռեք փորձառությամբ սովորելու հնարավորություն: • Խթանեք սովորողների մասնակցությունը՝

դասավորել հերթականությամբ՝ ըստ տառերի քանակի) և այլն:

- Կիրառեք հնչութային ընկալմանը, վերլուծությանն ու համադրությանն ուղղված խաղեր, բառակազմական և վերլուծական վարժություններ:
- Հնարավորինս շատ օգտագործեք գրատախտակ և այլ դիդակտիկ պարագաներ, երբ նոր նյութ եք հաղորդում:
- Կիրառեք նախազգուշացնող ազդակներ, օրինակ՝ ժեստեր, կպչուն թղթեր, հայացք կամ դիմախաղ, որպեսզի կարողանաք դրանց միջոցով աննկատ հուշումներ կամ զգուշացումներ անել:
- Սովորողին դիմեք անունով և համոզվեք, որ գտնվում եք նրա ուշադրության կենտրոնում:
- Կիրառեք ոչ խոսքային ազդանշաններ դասի կամ յուրաքանչյուր այլ գործողության մեկնարկն ազդարարելու համար (օրինակ՝ ձեռքի զանգ, ծափ, թակոց, երաժշտություն և այլն):
- Ներկայացրեք քննարկում, նախագծային աշխատանք, փոխադարձ ուսումնառություն, ներկայացում դասարանին:
- Օգտագործեք «պատասխանատու ընկեր» համակարգը:
- Օգտագործեք արձագանքի քարտեր:
- Խթանեք բանավոր արտահայտումը. շարադրություններ, բանաստեղծություններ, երգեր:
- Թույլ տվեք արտահայտվել նկարելու միջոցով՝ պաստառ, նկարչական ալբոմ:
- Առաջարկեք նյութը ներկայացնել համակարգչով՝ սահիկաշար, տեսանյութեր:
- Առաջարկեք փոքր խմբով քննարկում, նախագծային աշխատանք:
- Գնահատեք ամենօրյա փոքր հաջողությունները «Անհատական նվաճումների թերթիկում»՝ խրախուսելով սովորողներին փոքր քայլերի համար:
- Թույլ տվեք սովորողին գրավոր աշխատանքները կատարել մատիտով կամ ջնջվող գրիչով:
ապահովելով նյութերի բազմազանություն:
- Ներգրավեք սովորողներին՝ առաջարկելով տարբեր արտադասարանական նախագծեր:
- Անհատական օրագրերում գնահատեք ոչ միայն գիտելիքները, այլև՝ ակտիվությունն ու մասնակցությունը:
- Հնարավորություն տվեք սովորողներին կատարել հետահայաց ինքնագնահատում. սովորողները, ավարտելով ամբողջական թեման, գնահատում են իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները:
- Ստուգողական աշխատանքի առաջադրանքը տվեք դասի այն հատվածում, երբ սովորողի աշխատունակությունն ավելի բարձր է:
- Օգտագործեք ինքնագնահատման տեխնիկաներ.
- արտացոլման ինքնագնահատում՝ սովորողներն աշխատում են զույգերով և գնահատում մեկը մյուսի աշխատանքը,
- կանխատեսվող

գործողությունների պլանը, առաջադրանքը կատարելու սխեման, հատկացված ժամանակը և սահմանեք հստակ օրակարգ: • Օգտագործեք գույներ. սովորեցրեք երեխաներին գունավոր գրիչներ օգտագործել կարևոր տեղեկատվությունն ընդգծելու համար: • Նոր նյութ հաղորդելիս կապ ստեղծեք նախկինում յուրացված նյութի կամ կյանքում ունեցած փորձառության հետ, տնային աշխատանքները հանձնարարեք՝ կապելով կենցաղի հետ: • Ապահովեք սովորողի ԱՈւՊ-ով սահմանված ծրագրային և միջավայրային հարմարեցումները: • Ընտրեք աշակերտական սեղանների դասավորության լավագույն տարբերակը՝ հաշվի առնելով սովորողի առանձնահատկությունները: • Օգտագործեք 2 գույնի գրիչ. մեկն ուղղումների համար, մյուսը՝ առաջարկությունների (շտկումների ժամանակ պետք է ուղղել	• Ըստ անհրաժեշտության՝ դասարանը բաժանեք խմբերի (այդպիսով սովորողները միմյանց կաջակցեն և սերտ կհամագործակցեն) կամ առաջարկեք աշխատել զույգերով: • Բոլոր հնարավոր և անհրաժեշտ դեպքերում գիտելիքների ստուգմանն ուղղված գրավոր հանձնարարությունները փոխարինեք բանավոր հանձնարարություններով և ընդունեք սովորողի բանավոր պատասխանները (զեկույցները, ստուգողական և ստեղծագործական աշխատանքները): • Ընդունեք և գնահատեք նաև գրավոր այն աշխատանքները, որոնք սովորողը կատարել է համակարգչով: • Օգտագործեք ուղղորդող հարցեր (օրինակ՝ ճի՞շտ է, թե՝ սխալ, այո՞, թե՝ ոչ և այլն): • Գնահատեք տրված պատասխանը՝ հաշվի չառնելով հանձնարարությունների կատարման համար տրամադրված հավելյալ ժամանակը:	ինքնագնահատում՝ սովորողները, ծանոթանալով նոր նյութին, մշակում են իրենց կարողություններին համապատասխան գնահատման չափանիշներ՝ նշելով «աճի գագաթնակետը»: • Գնահատեք միայն սովորողներին ծանոթ ձևաչափով և գնահատման չափանիշներով, որոնք կարելի է մշակել նաև համատեղ: • Գնահատեք նյութի յուրացման մակարդակը «փոխադարձ գնահատման» միջոցով. սովորողները գնահատում են դասը, թե ի՞նչ, ինչպե՞ս և ինչքա՞ն յուրացվեց իրենց կողմից: • Խրախուսեք փոխադարձ ուսումնառությունը: • Գիտելիքի ստուգումն իրականացրեք գրավոր կամ բանավոր՝ սովորողին հարմար տարբերակով: • Գրավոր աշխատանքները ստուգելիս ուղղեք միայն թեմայի հետ կապված սխալները և մի

հատկապես այն սխալները, որոնք նախապես սովորողին ուսուցանվել են): • Օգտագործեք տեսողական նյութեր (ռելիեֆային քարտեզներ, գրաֆիկական սխեմաներ, նկար-քարտեր, հստակ և տեսանելի օրինակներ և դիդակտիկ պարագաներ, հուշումներ, զուգորդությունների ստեղծում իրերի և երևույթների միջև), երբ նոր հասկացություն եք ներմուծում կամ նոր նյութ եք ուսուցանում: • Կիրառեք տեսողական խթանիչ միջոցներ (նկարներ, դիագրամներ, պաստառներ, աղյուսակներ, քարտեր, իմացական քարտեզներ, գրաֆիկական սխեմաներ): • Ցուցադրեք նոր նյութին համապատասխան մուլտֆիլմեր, տեսանյութեր, այնուհետև քննարկեք դրանք սովորողի հետ (տեսանյութերը կարելի է պարբերաբար ցուցադրել նոր ստացած տեղեկությունն ամրապնդելու նպատակով): • Տրամադրեք		կենտրոնացեք տեխնիկական խնդիրների վրա, ինչպիսիք են անհամաչափ գրված տառերը, բառերի միջև անհամաչափ հեռավորությունները, տողի և լուսանցքի սահմաններից դուրս գալը և այլն: • Ուսումնառությունը կապեք սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը: • Նվազեցրեք սպառնալիքները, վտանգն ու անհանգստացնող երևույթները: • Ապահովեք հետաքրքրության ընդգրգկուն տարբեր միջոցներ: • Ստեղծեք բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար: • Խթանեք մոտիվացիան բարձր ակնկալիքների և շարունակական աջակցության միջոցով:

աուդիոգրքեր, ձայնագրություններ, ձայնագրիչներ դասը ձայնագրելու և այն կրկին լսելու հնարավորություն ունենալու համար: • Դասաժամը բաժանեք մասերի կամ պլանավորեք դասի թեմային համապատասխան համատեղ դասավանդում: • Հնձնարարությունները կրկնեք կամ հստակեցրեք՝ ապահովելով տեսողական կամ տպագիր նյութերով, որպեսզի օգնեք հասկանալու բանավոր ասված ցուցումները. գրել գրատախտակին, ընդգծել հանձնարարության կարևոր՝ «բանալի» բառերը կամ արտահայտությունները, բաժանել քայլերի, համարակալել ըստ տրամաբանական հաջորդականության: • Պահպանեք խոսքի հատուկ ռեժիմ՝ խոսեք ոչ շատ արագ, պարզ, հստակ, հասկանալի և ընդգծված արտասանությամբ: • Կիրառեք հաղորդակցության բազմաթիվ միջոցներ:		• Ընդգծեք և տեսանելի դարձրեք նպատակները և վերջնարդյունքները: • Զարգացրեք դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային ունակությունները: • Տրամադրեք մոտիվացնող և դրական հետադարձ կապ: • Զարգացրեք ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները: • Ընդգծեք և տեսանելի դարձրեք նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը:

• Օգտագործեք ուսունառության վերջնարդյունքի ձևավորման և ստեղծման բազմապիսի միջոցներ:		

II. Աջակցություն սովորողների վարքագծի կառավարմանը

Կարևոր է գիտակցել, որ վարքի ցանկացած դրսևորում առաջին հերթին հաղորդակցման ձև է:

Ուսուցչի օգնականի դերը սովորողի վարքագծի կառավարման գործընթացում

Ինչպես արդեն նշվել է վերևում, սովորողներին աջակցելիս ուսուցչի օգնականն աշխատանքներ է իրականացնում նաև սովորողների վարքագծի կառավարման ուղղությամբ: Հետևաբար, շատ կարևոր է իմանալ վարքի այս կամ այն դրսևորման պատճառը, ինչը հնարավոր է բացահայտել դիտարկման և հավաքագրված տեղեկությունների վերլուծության արդյունքում: Սովորողի կողմից դրսևորվող և տվյալ իրավիճակի համար անընդունելի վարքագիծը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով: Ուսուցչի օգնականը պետք է կարողանա հասկանալ սովորողի «բացասական» վարքի իրական դրդապատճառը, ընտրել տվյալ վարքն անմիջապես դադարեցնելու ամենաարդյունավետ միջոցը և մշակել նրա հետ փոխգործակցության ռազմավարություն՝ հետագայում այդպիսի վարքի կրկնությունը նվազեցնելու կամ կանխելու համար: Կանխատեսելով սովորողի արձագանքն այս կամ այն մանկավարժական միջամտությանը՝ ուսուցչի օգնականը պետք է դրսևորի համապատասխան վարքագիծ: Ուսուցչի օգնականը, հստակ պատկերացնելով իր անելիքները, միջավայրը և գտնվելու վայրը՝ պետք է իր կողմից դրսևորվող վարքի նկատմամբ հետևողական լինի (Sharples, Webster, Blatchford, 2015): Նա պետք է ունենա բաց քննարկումներ և զրույցներ ինչպես ուսուցիչների, այնպես էլ ծնողների հետ՝ աշխատանքը ճիշտ կազմակերպելու և միևնույն մոտեցումը ցուցաբերելու համար (Tobin, 2006):

Եթե ուսուցչի օգնականը դժվարանում է ինքնուրույն կազմակերպել սովորողների վարքի կառավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, կարող է լրացուցիչ աջակցություն խնդրել ուսուցիչներից, ղեկավար անձնակազմից, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից (Tobin, 2006):

Որո՞նք են սովորողների դժվար կառավարվող վարքի հնարավոր պատճառները.

Ուսուցչի օգնականի ճիշտ և նպատակաուղղված աշխատանքի համար մեծ նշանակություն ունի սովորողի դժվար կառավարելի վարքային դրսևորումների պատճառների բացահայտումը: Անցանկալի վարքային դրսևորումների հավանական պատճառներ կարող են լինել.

- առողջության հետ կապված խնդիրները. արդյո՞ք սովորողի անհանգիստ վարքը պայմանավորված է առողջական խնդիրներով: Եթե երեխան ցավի կամ անհանգստության զգացում է ունենում, ապա նա կարող է փորձել արտահայտել դա անհանգիստ վարքագծով, հատկապես, եթե սովորողը հաղորդակցվելու դժվարություն ունի:
- Վարքային խանգարումներ, ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ, աուտիստիկ սպեկտորի խանգարում և ուսման այլ դժվարություններ. վերոնշյալ խանգարումները կարող են պատճառ հանդիսանալ սովորողների հույզերը և զգացմունքները կառավարելու և արտահայտելու գործընթացում: Ավելին, այս դժվարություններն ունեցող սովորողները հաճախ այլ սովորողների կողմից մերժվում են ամենօրյա շփումներում, և նրանց անցանկալի վարքի դրսևորումներն ավելի են արտահայտվում:
- Միջավայրային փոփոխություններ. շատ կարևոր է իմանալ՝ արդյո՞ք վերջին ժամանակաշրջանում սովորողի կյանքում ինչ-որ լուրջ փոփոխություններ չեն եղել, որոնք կարող էին հանգեցնել անցանկալի վարքային դրսևորումների, օրինակ՝ գուցե սովորողը տեղափոխվել է այլ դպրոցից, նրա ծնողները ամուսնալուծվել են, կամ էլ՝ նրանցից որևէ մեկը հեռացել է կյանքից և այլն (Sharples, Webster, Blatchford, 2015):
- Ամրապնդված անցանկալի վարքային դրսևորումներ. սովորողի մոտ կարող է ամրապնդված լինել այն անցանկալի վարքը, որի միջոցով նա ստանում է իր համար ցանկալի առարկան կամ զբաղմունքը, կամ գուցե շատ ժամանակ է անցկացնում այնպիսի միջավայրում, որտեղ գործում են նույն կերպ:
- Ոչ բարենպաստ պայմաններ. ոչ բարենպաստ ընտանեկան միջավայր, ինչպիսիք են, օրինակ՝ հաճախակի վեճերը, որոնք կարող են երեխայի մոտ սխալ պատկերացումներ ձևավորել ընտանիքի մասին: Նա կարող է կրկնել նույն վարքագիծը՝ կարծելով, որ դա բնականոն երևույթ է: Երբեմն էլ, երբ

առկա է ընտանեկան բռնություն, ընտանիքի անդամներից որևէ մեկն ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ կամ վնասակար սովորություններ, ապա երեխան կարող է դրսևորել բացասական վարք՝ որպես ելք փնտրելու միջոց (Kingsley, 2008):

- Ձանձրույթ. անտարբերություն կամ անհանգիստ վարքային դրսևորում-ներ կարող են առաջանալ սովորողի մոտ, եթե նա ձանձրանում է իրեն հանձնարարված աշխատանքից: Հարկ է նշել, որ չբացահայտված տաղանդը կարող է նույնպես հանգեցնել որևէ անցանկալի վարքային դրսևորման, քանի որ սովորողները ստիպված են լինում կենտրոնանալ մի աշխատանքի վրա, որը նրանց հետաքրքիր չէ:
- Օրվա ռեժիմի բացակայություն. օրվա ռեժիմը, որը չի կարգավորվում տան պայմաններում, նայնպես կարող է ազդել վարքի վրա, օրինակ՝ ուշ քնելը, անբավարար քունը, թույլատրելի վարքագծի սահմանների բացակայությունը, սահմանված ռեժիմի կտրուկ փոփոխությունը կամ դրանից տեղեկացված չլինելը:

Ուսուցչի օգնականը կարող է լիարժեք չկարողանա հաղթահարել և վերացնել բացասական վարքային դրսևորումները, սակայն, բացահայտելով սովորողի վարքի դրսևորման պատճառները՝ կարող է ձեռնարկել միջոցառումներ ուսումնական հաստատությունում սովորողի վարքը կառավարելու համար (Clarke, Visser, 2016; Sharples, Webster, Blatchford, 2015):

ՀԻՇԵ՛Ք.

Ժամանակ առ ժամանակ բոլոր երեխաներն էլ կարող են դրսևորել անցանկալի վարք՝ տարբեր միջավայրերում և տարբեր պատճառներով: Եթե Դուք ունեք սովորողների վարքի կառավարման ռազմավարություններ և հասկանում եք վարքի դրսևորման դրդապատճառները, ապա կարող եք նվազագույնի հասցնել սովորողի անցանկալի վարքային դրսևորումները:

Սովորողի վարքի կառավարմանն ուղղված ռազմավարություններ

ԽՈՐՀՈՒՐԴ 4

Սահմանեք դասարանական կանոններ, վարքի կառավարմանն ուղղված ռազմավարություններ՝ համագործակցելով ուսուցչի հետ:

Սովորողների վարքի կառավարման գործընթացում ուսուցչի օգնականը պետք է դիտարկի սովորողների վարքը և մշակի անցանկալի վարքագծի կանխարգելմանն ուղղված ռազմավարություններ: Հետևաբար, ուսուցչի օգնականը պետք է ունենա համապատասխան հմտություններ՝ սովորողների վարքը և ճգնաժամային իրավիճակները գնահատելու և կառավարելու համար (Sharples, Webster, Blatchford, 2015):

Ուսուցչի օգնականը կարող է հասնել դրական արդյունքի, եթե ունի արդյանավետ նյութերով, մեթոդներով և ռազմավարություններով հարուստ զինանոց: Աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար կարևոր է ձեռքի տակ եղած բազմազան ռեսուրսներից կատարել ճիշտ ընտրություն՝ իրավիճակին համապատասխան: Ստորև առաջարկում ենք մի շարք ռազմավարություններ, որոնք օգտակար կլինեն ուսուցչի օգնականին ճգնաժամային իրավիճակում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար.

1. **Լսել և հասկանալ**

Կարևոր է լսել և հասկանալ, թե ինչ են ասում սովորողները խոսքային և ոչ խոսքային եղանակով: Երբ ընդունենք, որ յուրաքանչյուր սովորող ունի իր տեսակետը, որը կարող է տարբերվել մեր տեսակետից, ավելի հեշտ կլինի գտնել ընդհանուր լեզու՝ վարքի հետ կապված դժվարությունները հաղթահարելու համար: Վարքային խնդիրներ ունեցող սովորողների հետ շփվելիս անհրաժեշտ է ուշադիր լինել և պահպանել տեսողական կոնտակտը, լսել սովորողին առանց ընդհատելու և պահպանել գաղտնիությունը:

Երեխաների մեծամասնությունը մեկ օրվա ընթացքում ենթարկվում է ավելի շատ նկատողությունների, քան՝ խրախուսանքի: Որոշ ուսումնասիրություններ ցույց

են տալիս, որ երեխաներին ուղղված մեկնաբանությունների 90%-ը բացասական են կամ ուղղորդող: Որքան շատ կարողանանք անմիջականորեն և անկեղծորեն շփվել սովորողների հետ, այնքան նրանք իրենց ավելի շատ հարգված և գնահատված կհամարեն: Այս անմիջական ներգրավվածությունը դրականորեն կազդի նրանց վարքի վրա (Kingsley, 2008):

2. Սահմանել հստակ կանոններ

Սովորողները պետք է հստակ իմանան, թե իրենց ինչն է թույլատրվում և ինչը՝ ոչ: Նրանք պետք է ունենան կանխատեսելի սահմաններ, որոնք կօգնեն նրանց իմաստավորել իրենց աշխարհը, կօգնեն ապահով զգալ իրենց, և պետք է նրանց առաջնորդել դեպի ընդունելի վարք:

Կանոններ սահմանելիս անհրաժեշտ է.

- խրախուսել բոլոր սովորողներին ինքնուրույն կանոններ սահմանելու գործում, թե' դպրոցում, թե' դասարանում, քանի որ սովորողներն ավելի մեծ պատասխանատվությամբ կհետևեն իրենց կողմից սահմանված կանոններին, քան՝ պարզապես դրանք լսեն կամ կարդան պատին փակցված: Սա հատկապես կարևոր է իրականացնել ուսումնական տարվա սկզբին:
- Սկսել քննարկում՝ հարցնելով սովորողներին, թե իրենց կարծիքով ինչն է թույլատրելի, ինչը՝ ոչ (Kingsley, 2008, Bentham, 2006):

3. Խթանել փոխզիջումը

Գնացեք փոխզիջման. սովորողներին ինչ-որ բան պարտադրելու փոխարեն, փորձեք օգտագործել այլընտրանքային միջոցներ, օրինակ՝ սահմանել հաջորդ օրվա օրակարգը, գտնել ընդհանուր հետաքրքրություններ, լինել ընկերական, ապահովել այլընտրանք և հիմնավորել «ոչ» պատասխանը (Kingsley, 2008):

4. Բավարարել սովորողի ֆիզիկական և հուզական կարիքները

Կարևոր է զարգացնել սովորողների ինքնագիտակցությունը և իրենց մասին հոգ տանելու կարողությունը: Երբեմն, երբ սովորողի ֆիզիկական կարիքները չեն բավարարվում, դրանք դառնում են ագրեսիվ գործողություններիպատճառ: Կարևոր է երեխային սովորեցնել հիշել իր ֆիզիկական և հուզական կարիքների մասին՝ քաղց, զայրույթ, միայնակություն, հոգնածություն.

- քաղցը կարող է լինել ֆիզիկական կամ հուզական պահանջմունք: Եթե այն ֆիզիկական է, ապա երեխային առաջարկեք որևէ մթերք, իսկ եթե

հուզական է, օգնեք նրան անվանել հուզական պահանջմունքը, որը զգում է (Kingsley, 2008):

- Զայրույթը առողջ հույզ է: Եթե սովորողը զայրացած է մեկ այլ սովորողի վրա, ապա փորձեք ստանձնել միջնորդի դերը: Ֆիզիկական ակտիվությունը նույնպես օգնում է զայրույթի հաղթահարմանը՝ գնացեք քայլելու, շատ ժամանակ անցկացրեք դահլիճում և այլն:
- Միայնակության զգացում կարող է առաջանալ ինչպես խմբում, այնպես էլ միայնության մեջ գտնվելիս: Հուզական խնդիրներ և վարքի խանգարում ունեցող սովորողները մեկուսանում են շրջապատից տարբեր պատճառներով: Եթե նկատում եք, որ սովորողը մեկուսացել է, ներգրավեք նրան զրույցի մեջ, օգնեք շփվել հասակակիցների հետ:
- Հոգնածությունը նպաստում է անաշխատունակության բարձրացմանը: Առաջարկեք մի փոքր հանգիստ կամ կարճ զբոսանք, եթե նկատում եք, որ սովորողը հոգնածություն է զգում (Bentham, 2006):

5. Խրախուսել ամենօրյա ֆիզիկական գործունեությունը

Ֆիզիկական վարժանքներն այն լավագույն միջոցներն են, որ օգնում են սովորողներին վերահսկել ինչպես իրենց ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջությունը: Դրանք թույլ են տալիս սովորողներին կենտրոնանալ ֆիզիկական գործունեության վրա և ցրում են բացասական մտքերը՝ ազատելով անհանգստությունից և լարվածությունից: Որպես հավելյալ օգուտ՝ այն բարելավում է հիշողությունը, քունը, բարձրացնում է ինքնագնահատականը: Դրական վարքի փոփոխության համար ցուցաբերեք օրինակելի վարք՝ ֆիզիկական ակտիվությունը դարձրեք դպրոցի առօրյայի անբաժանելի մասը (Sharples, Webster, Blatchford, 2015):

6. Խրախուսել սովորողների դրական վարքագիծը

Երբեմն բացասական վարքը միակ միջոցն է, որով սովորողը կարող է գրավել Ձեր ուշադրությունը և «խոսել» իր կարիքների մասին: Անցանկալի վարքագիծը շեշտադրելու և ամրապնդելու փոխարեն՝ փորձեք տեսնել և խրախուսել դրականը: Ստորև ներկայացված են հաջորդական քայլեր, որոնք կօգնեն ամրապնդել դրական վարքագիծը և անտեսել անցանկալին.

- դիտարկեք այն ժամանակահատվածը, երբ դասարանում նկատում եք անցանկալի վարքային դրսևորումներ:

- Դիտարկեք ընդմիջումները օրվա ընթացքում, երբ սովորողը բացասական վարք է դրսևորում:
- Եթե սահմանված ժամանակահատվածում սովորողը չի դրսևորում բացասական վարք, գովեք նրան կամ պարգևատրեք:
- Եթե սահմանված ժամանակահատվածում սովորողը դրսևորում է բացասական վարք, ապա անտեսեք նման վարքագիծը (եթե դա հնարավոր է): Ձեր ուշադրությունն ուղղեք այն սովորողներին, ովքեր հետևում են դրական վարքի կանոններին և խրախուսեք նրանց (Bentham, 2006):

Ժամանակ առ ժամանակ կազմակերպեք միջոցառումներ՝ սովորողների ձեռքբերումները և դրական վարքը խրախուսելու համար: Սա դրական վարքն ամրապնդելու արդյունավետ մեթոդ է: Ուսուցչի օգնականը կարող է նախապես սովորողների հետ քննարկել, թե ինչպիսի խրախուսանք կարող են ստանալ այն սովորողները, ովքեր մեկ շաբաթվա ընթացքում դրսևորել են դրական վարքագիծ: Նախապես սովորողների հետ կազմեք վարքի խրախուսման ձևաթղթեր՝ հաշվի առնելով սովորողներից յուրաքանչյուրի վարքի կառավարման դժվարությունները, օրինակ՝ այն սովորողների համար, ովքեր հաճախ են մեկուսանում խմբից, ձևաթուղթը կպարունակի շփումը խրախուսող որևէ առաջադրանք (Bentham, 2006):

7. Մոդելավորել սոցիալական հմտությունները

Սոցիալական հմտությունն այն վարքն է, որն իր մեջ ներառում է համագործակցություն, համատեղ աշխատանք, խաղային գործունեություն (միասին խաղալու հմտություն) և դժվարին իրավիճակում գտնվողներին հուզական աջակցություն: Վարքային խնդիրներ ունեցող սովորողների մոտ հաճախ զարգացած չեն վերոնշյալ սոցիալական հմտությունները: Ուսուցչի օգնականները կարող են նպաստել այդ հմտությունների զարգացմանը.

- ցուցադրեք դրական օրինակելի վարքագիծ: Որքան ավելի շատ են սովորողները տեսնում մեծահասակների դրական փոխազդեցությունները միմյանց հետ, այնքան ավելի հավանական է, որ իրենք կնմանակեն այդ գործողությունները:
- Խոսեք ընդհանուր սոցիալական իրավիճակների մասին և հետադարձ կապ տրամադրեք համապատասխան սոցիալական փոխազդեցության վերաբերյալ:

- Խնդրեք սովորողներին ներկայացնել սոցիալական իրավիճակներ, դերային խաղեր, և առաջարկեք համապատասխան լուծումներ (Bentham, 2006):

8. Կիրառել ոչ խոսքային միջոցներ (ժեստեր, դիմախաղ, շարժումներ)

Հաղորդակցությունը կարող է լինել խոսքային և ոչ խոսքային: Պետք է վստահ լինեք, որ այն ազդակները, որոնք փոխանցում եք Ձեր «մարմնի լեզվի» միջոցով, դրական են և տպավորիչ (Kingsley, 2008): Սովորողներին աջակցելիս ուսուցչի օգնականը կարող է օգտագործել ժեստեր՝ խոսքը շեշտադրելու համար: Ոչ խոսքային միջոցների կիրառումը արդյունավետ կարող է լինել հատկապես ագրեսիվ վարքային դրսևորումներ ունեցող սովորողներին աջակցելիս, սակայն դրանք պետք է ընտրել և կիրառել՝ հաշվի առնելով սովորողի առանձնահատկությունները:

III. Աջակցություն այն սովորողներին, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ԽՈՐՀՈՒՐԴ 5

Դասի ընթացքում Ձեր ուշադրության կենտրոնում պահեք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, սակայն հետևողական եղեք, որ այդ լրացուցիչ ուշադրությունը երեխաների խմբում առանձնանալու պատճառ չդառնա:

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, որն ամրագրվել է դեռևս 1948 թվականի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 26-րդ հոդվածում: Համաձայն 1994 թվականի «Սալամանկայի հռչակագրի»՝ յուրաքանչյուր երեխա ունի սովորելու առանձնահատկություններ, այդ իսկ պատճառով բոլոր դպրոցներում սովորողների համար պետք է ստեղծված լինեն երեխայակենտրոն մանկավարժական հիմքեր, որոնք պետք է ուղղված լինեն այդ կրթության առանձնահատուկ պայմանների բավարարմանը: Կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք հասանելի և արդյունավետ կլինեն բոլոր սովորողների, այլ ոչ թե՝ սովորողների կոնկրետ խմբերի համար, և ուղղված կլինեն յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմանը:

Չնայած ներառական կրթության բազմաթիվ առավելություններին՝ դեռևս կան խոչընդոտներ այն լիակատար իրականացնելու ճանապարհին: Որակյալ կրթության ապահովման հիմքը մեթոդների, մոտեցումների բազմազանության ընդունումն է, որը դեռևս խնդիր է, որի հետ ներկայումս բախվում են դպրոցները և ուսուցիչները, քանի որ այն կապված է ընդունված նորմերի, մոտեցումների, ուսումնական ծրագրերի, դասավանդման փորձի, ուսուցիչների վերապատրաստման, համակարգի գնահատման և դպրոցների կառավարման լուրջ փոփոխությունների հետ (Սվաջյան և ուրիշներ, 2020):

Եվ ինչպես արդեն նշել ենք նախորդ բաժիններում, ուսուցչի օգնականի աշխատանքի ուղղություններից մեկն էլ համարվում է աջակցության ցուցաբերումը

ԿԱՊԿ ունեցող սովորողներին, նրանց ուսուցման կազմակերպմանը և սահուն ներառմանը: Ինչպես դպրոցի ուսուցչական անձնակազմը, այնպես էլ ուսուցչի օգնականները պետք է հստակ տեղեկացված լինեն սովորողներին անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների մասին, քանի որ դա հնարավորություն կտա հստակ հասկանալ սովորողների կարողությունները, ուժեղ կողմերը, դրսևորվող դժվարությունները, և դրանց վրա հիմնվելով՝ կկարողանան կազմակերպել արդյունավետ ուսումնառությունը:

ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատանքում ուսուցչի օգնականի ցուցաբերած աջակցությունն ուղղված է և՛ սովորողին, և՛ ուսուցչին: Դասապրոցեսի ընթացքում ուսուցիչը պահպանում է դասի վերահսկողությունը/կառուցվածքը և ապահովում է յուրաքանչյուր սովորողի ուսման արդյունքը դասարանում, իսկ ուսուցչի օգնականն աջակցում է յուրաքանչյուր սովորողին՝ հաղթահարելու ուսուցման ընթացքում ծագած ցանկացած խոչընդոտ:

Ստորև ներկայացված են այն աշխատանքները, որոնք պետք է իրականացնի ուսուցչի օգնականը՝ սովորողների մոտ ԿԱՊԿ-ի առկայության դեպքում.

- մասնակցել դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը,
- օժանդակել ԿԱՊԿ ունեցող սովորողների ֆիզիկական միջավայրի հարմարեցմանը,
- իրականացնել դիտարկում սովորողների անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները և պահանջմունքները բացահայտելու նպատակով,
- համագործակցել ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատող բոլոր մասնագետների հետ, և մասնակցել նրանց ԱՈՒՊ-ի կազմման աշխատանքներին,
- ուսուցչի հետ համատեղ կազմել և վարել սովորողի անհատական թղթապանակը,
- հոգ տանել սովորողների մասնագիտական կողմնորոշման և սոցիալական հարմարվողականության մասին,
- ուսուցչի հետ միասին գնահատել սովորողի կրթական առաջընթացը,
- ուսումնասիրել և վերլուծել սովորողի զարգացման առաջընթացը (Giangreco, Doyle, 2007; Giangreco et al., 2001):

Հարկ է նշել, որ ուսուցչի օգնականի մասնակցությունը պարտադիր է սովորողի նախատեսված նպատակների սահմանման գործընթացին համապատասխան աջակցություն ցուցաբերելու համար (աջակցությունը կարող է լինել ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումների տեսքով):

Ուսուցչի օգնականն ԱՈՒՊ-ի տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ուսուցչի անմիջական աջակիցն է: Ուսուցչի օգնականը՝

- ուսուցչի ուղղորդմամբ սովորողին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կապված ուսուցման գործընթացների և նոր հանձնարարությունների հետ,
- տվյալ սովորողի առարկայական ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին և ծնողին տեղեկատվություն է տրամադրում նախկինում կիրառված արդյունավետ ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների մասին,
- օգնում է ուսուցիչներին դասի պլանավորման և ուսումնամեթոդական նյութերի պատրաստման ու տրամադրման հարցերում,
- մասնակցում է ԱՈՒՊ-ի վերաբերյալ խմբային քննարկումներին, ինչպես նաև՝ մշտադիտարկման, ընթացիկ գնահատման և կիսամյակային ու տարեկան ամփոփիչ գնահատման գործընթացները[4]:

Սա իր հերթին նպաստում է ավելի սերտ համագործակցության առաջացմանն ուսուցիչների, աջակցող մասնագետների և սովորողների միջև:

Ինչպես նշեցինք, ուսուցչի օգնականի կարևորագույն գործառույթներից է ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսումնականական գործընթացի և միջավայրային պայմանների հարմարեցումը: Բոլոր այն միջոցները, որոնք կիրառվում են կրթական միջավայրում և թույլ են տալիս ԿԱՊԿ ունեցող աշակերտին հնարավորության սահմաններում կրթություն ստանալ իր հասակակիցների հետ՝ համարվում են հարմարեցումներ:

Ուսումնական գործընթացի հարմարեցումը յուրաքանչյուր աշակերտի ուսուցման և ուսումնառության գործընթացին մասնակցելու հավասար հնարավորության և մատչելիության ապահովումն է: Որպեսզի ուսումնական

[4] «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1391-Ն

գործընթացը լինի մատչելի և հասանելի բոլոր երեխաներին, այն պետք է հնարավորինս հարմարեցնել և համապատասխանեցնել սովորողների մտավոր, ֆիզիկական, սոցիալական, հուզական և հոգևոր կարիքներին: Այս ամենը ենթադրում է ուսուցչի, ուսուցչի օգնականի և աջակցող թիմի համագործակցային աշխատանք: Կարելի է փոփոխել ուսումնական նյութը ներկայացնելու, սովորեցնելու և գնահատելու ձևերը (World Declaration on Education For All, UNESCO, 1990):

Ուսումնական միջավայրը ևս շատ կարևոր է արդյունավետ կրթական գործընթաց իրականացնելու համար: Հարմարեցված ուսումնական միջավայրը ուսուցման գործընթացը դարձնում են առավել արդյունավետ և սովորողին թույլ են տալիս առավել հարմարավետ տարբերակով ձեռք բերել գիտելիքներ, փորձ կամ հմտություններ: Միջավայրային հարմարեցումների թվին են պատկանում սովորողի նստելու տեղի, դասարանում գույքի դասավորվածության, ձայնային, լուսային ազդակների բաշխվածության հարմարեցումները, կրթության կամ անձնական օգտագործման համար անհրաժեշտ սարքավորումները, մեթոդները, տեխնոլոգիաները, ինչպես նաև՝ սովորողին այլ անձանց կողմից տրամադրվող աջակցությունը (Ahuja et al., 2004):

Առաջընթացի գնահատման գործընթացի հարմարեցումները ևս շատ կարևոր են կրթության կազմակերպման գործընթացում: Հարկ է նշել, որ ուսուցչի օգնականը ինքուրույն՝ առանց դասավանդող ուսուցչի, չի կարող իրականացնել սովորողի առաջընթացի գնահատում: Սակայն հասկանալի է, որ կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է գնահատման ավանդական մոտեցումների վերանայում և կիրառում, որին կարող է մասնակից լինել ուսուցչի օգնականը, քանի որ նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ (World Declaration on Education For All, UNESCO, 1990):

Ստորև առաջարկում ենք խորհուրդներ ուսուցչի օգնականին ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատանքներ իրականացնելիս (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. *Խելամիտ հարմարեցումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքում*

Եթե երեխան ունի ձայնի և խոսքի հետ կապված խնդիրներ	
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	▪ Հարցերը և առաջադրանքները բաժանեք մասերի: ▪ Առաջադրանքները բացատրեք պարզ, համառոտ նախադասություններով: ▪ Կատարեք բառային աշխատանքներ բոլոր անծանոթ բառերի բացատրությամբ: ▪ Հարստացրեք բառապաշարը, ձևավորեք և զարգացրեք խոսքի քերականական կողմը՝ լեզվի բնականոն զարգացման օրինաչափություններին համապատաս-խան: ▪ Սովորողի հետ խոսելիս պահպանեք խոսքի հատուկ ռեժիմ՝ խոսեք ոչ շատ արագ, պարզ, հստակ, հասկանալի և ընդգծված արտասանությամբ (Պայլոզյան, Թադևոսյան, 2011) ▪ Օգնեք սովորողին կառավարել հանձնարարությունների համար նախատեսված ժամանակը: ▪ Համոզվեք, որ սովորողը հասկացել է Ձեր խոսքը, դիմեք նրան՝ խնդրելով բացատրել ասվածի իմաստը, ինչը հնարավորություն կտա երկխոսության մեջ մտնել նրա հետ (Van Riper, Ericson, 1996): ▪ Համագործակցեք լոգոպեդի հետ:
Միջավայրային հարմարեցումներ	▪ Ապահովեք դասասենյակն անհրաժեշտ հարմարեցումներով՝ տեսաձայնադարանով, լուսավո-րությամբ և զանազան դիդակտիկայով՝ նկարներ, գրաֆիկներ, սխեմաներ, տակտիլ նյութեր, պաստառներ և այլն: ▪ Օգտագործեք համակարգիչ. այդ դեպքում

	հաղթահարվում են թե՛ անընթեռնելի ձեռագրի, թե՛ նուրբ շարժունակության հետ կապված խնդիրները (Ադամյան, Մարգարյան, 2019): ▪ Կիրառեք այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցման միջոցներ (ԱԼՀ). անհրաժեշտ է համոզվել, որ սովորողն ունի իր ցանկություններն ու կարիքները համապատասխանաբար արտահայտելու միջոց: Հաղորդակցման զարգացմանը մեծապես նպաստում են հետևյալ այլընտրանքային միջոցները՝ ժեստերը, նկարները, սիմվոլները, «խոսող սարքերը», տեխնիկական սարքերում (հեռախոս, պլանշետ, համակարգիչ) ներբեռնվող համակարգչային ծրագրերը:
Եթե երեխան ունի տեսողության հետ կապված խնդիրներ	
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	▪ Տվեք խոսքային հստակ ցուցումներ, առավել ևս այն դեպքերում, երբ օգտագործում եք տեսողական նյութեր, քանի որ երեխան կարող է չընկալել դրանք, կամ սխալ մեկնաբանել Ձեր ժեստերը և դեմքի արտահայտությունը: ▪ Ստեղծեք խոշորացված աշխատանքային նյութեր, որտեղ տպագիր նյութերը լինեն մաքուր թղթի վրա և բարձր գունային հակադրությամբ տառերով, առանց զարդարված տառատեսակների: ▪ Տպագիր նյութեր կազմելիս օգտագործեք «Arial» տառատեսակը և 16 տառաչափը (անհրաժեշտության դեպքում՝ ավելի մեծ տառաչափ), վերնագրերը, առաջադրանքի պահանջները կամ այլ կարևոր հատվածներ ավելի տեսանելի դարձնելու համար մգացրեք/ընդգծեք տեքստը: ▪ Օգտագործեք գրավոր աշխատանքների համար նախատեսված մուգ լուսանցքներով և տողերով թղթեր:

	▪ Սահմանափակեք անընդհատ ընթերցանության համար ծախսվող ժամանակը, անհրաժեշտության դեպքում՝ մի քանի տող կարդալուց հետո, երեխան կարող է հայացքը կտրել գրքից, 1-2 վայրկյան նայել հեռավորության վրա գտնվող այլ առարկայի կամ, պարզապես, փակել աչքերը (տեսողության խանգարումների առկայության դեպքերում առավելագույն սահմանը 15 րոպեն է): ▪ Կարդացեք սովորողի համար այն, ինչ նա ինքնուրույն կարդալ չի կարողանում փոքր կամ անհասկանալի տառատեսակի պատճառով կամ տրամադրեք աուդիոգրքեր, ձայնագրություններ: ▪ Օգնեք սովորողին կառավարել ժամանակը՝ առաջադրանքները կատարելու և ավարտին հասցնելու համար, անհրաժեշտության դեպքում տրամադրելով դադարներ՝ գերհոգնածությունից խուսափելու համար: ▪ Տեսողության ծանր աստիճանի խանգարումների դեպքում՝ խոսքայնացրեք այն, ինչ սովորաբար ցույց եք տալիս ժեստերով, իսկ սովորողներին դիմելիս՝ անպայման սկզբում նշեք նրանց անունները, հետո նոր սկսեք խոսել, որպեսզի տեսողության խնդիրներ ունեցող սովորողն իմանա, թե ովքեր են խոսում (Մուրադյան, 2017, Назарова, 2005):
Միջավայրային հարմարեցումներ	▪ Խրախուսեք երեխային օգտագործել տեսողական սարքեր, միջոցներ, որոնք նախատեսված են տեսողական դժվարությունները փոխհատուցելու համար (օրինակ՝ ակնոցներ, խոշորացույցներ, մեծ տառաչափ ունեցող տպագիր գրքեր և այլն): ▪ Գտեք այն ճիշտ տեղն ու դիրքը, որտեղից սովորողն ամենալավն է տեսնում գրատախտակը: ▪ Խուսափեք արևի ուղիղ ճառագայթների տակ

	աշխատանքներ կատարելուց, քանի որ սպիտակ թղթի վրա արտացոլված արևի լույսից աչքերը լարվում են և շուտ հոգնում: Լույսը, աշխատանքային մակերեսի վրա պետք է ընկնի սովորողի ձախ կողմից, իսկ աչքերը մնան ստվերում: ▪ Գրասեղանի և գրատախտակի դասավորվածությունն այնպես համապատասխանեցրեք, որպեսզի գրատախտակի մակերեսը սովորողի նստած դիրքից չփայլի: ▪ Հետևողական եղեք դասարանում համաչափ լուսավորության ապահովմանը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանով սահմանված հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների բնական և արհեստական լուսավորությանը ներկայացվող պահանջներին[5]: ▪ Խուսափեք դասասենյակում գույքի դասավորվածության և իրերի տեղադրության հաճախակի փոփոխություններից՝ սովորողի համար ավելորդ դժվարություններ չստեղծելու համար: ▪ Հետևողական եղեք միջավայրային այնպիսի հարմարեցումների ապահովմանը, ինչպիսիք են դեղին գծերը, ուղենշող սալիկները, մակետներով քարտեզագրումը, տոպոգրաֆիկ քարտեզները, պատկերները, զգուշացնող և ուղենշող սալիկները, տարածական կողմնորոշման հրահանգիչը, ձայնային ազդանշանները և այլն (Դավթյան, 2018): ▪ Կիրառեք տեսողական սարքեր և միջոցներ՝ բրայլյան համակարգի ուսուցման սարքավորումներ՝ դիսփլեյ,

[5] «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ»-ի մասին ՀՀ առողջապահության նախարարի՝ 28.03.2017թ-ի N 12-Ն հրաման

	գրամեքենա, տետրեր, գրելու կաղապարներ, էլեկտրոնային խոշորացուցիչներ: ▪ Կիրառեք պատճենահանիչ սարքեր բրայլյան տառատեսակով տպագրության համար: ▪ Համագործակցեք տիֆլոմանկավարժի հետ:
Եթե երեխան ունի լսողության հետ կապված խնդիրներ	
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	▪ Նախապես սովորողին բացատրեք առաջադրանքի պահանջը և հնարավորություն տվեք այն ինքուրույն կատարելու: ▪ Բառերն արտասանեք հստակ՝ շեշելով հատկապես վերջավորությունները: ▪ Համոզվեք, որ սովորողը հասկացել է Ձեր խոսքը՝ խնդրելով բացատրել ասվածի իմաստը: ▪ Օգտագործեք համառոտ և պարզ նախադասություններ, ծանոթ բառեր՝ նույն գաղափարների կամ երևույթների մասին պատմելիս: Նոր բառեր ներմուծելու ժամանակ դրանք ուղեկցեք սովորողներին ծանոթ այլ հոմանիշ բառերով և պատկերներով: ▪ Կիրառեք կապակցված խոսքի և բառապաշարի զարգացմանը միտված տեքստեր, վարժություններ և առաջադրանքներ: ▪ Օգտագործեք դիդակտիկ պարագաներ նոր նյութի հաղորդման ժամանակ: ▪ Գրավոր աշխատանքներ, հատկապես՝ թելադրություն հանձնարարելուց առաջ սովորողին ներկայացրեք նյութի բովանդակությունը՝ կիրառելով դիդակտիկ պարագաներ (նկարներ, առարկաներ, բառաքարտեր, կետադրական նշաններ, օժանդակ բայեր պարունակող քարտեր):

	▪ Օգնեք սովորողին կառավարել ժամանակը՝ առաջադրանքները կատարելու և ավարտին հասցնելու համար (Королева, 2011, Манукян, 2009):
Միջավայրային հարմարեցումներ	▪ Դեմքով կանգնեք դեպի սովորողը, երբ խոսում եք: ▪ Հետևեք, որպեսզի դասապրոցեսի ընթացքում սովորողը կրի լսողական սարքը և դրա մարտկոցը սարքին լինի: ▪ Հիշեցրեք սովորողին և/կամ ծնողին, որ պայուսակում լինի զույգ մարտկոց, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, հնարավոր լինի արագ փոխել դրանք: ▪ Հուշեք սովորողին իջեցնել ձայնակարգավորիչը կամ անջատել լսողական սարքը, երբ դասարանում աղմուկ է: ▪ Ապահովեք, որպեսզի սովորողը նստի իրեն հարմար տեղում: ▪ Հնարավորության դեպքում անհատական և խմբային աշխատանքների ժամանակ կիրառեք FM համակարգ, այն հնարավորություն է տալիս պարզ լսել խոսողի ձայնը մեծ տարածության վրա: ▪ Աշխատեք դասարանը հարստացնել տեսադարանով, տեսաֆիլմերով, նկարներով, լուսանկարներով, գրաֆիկական պատկերներով, բառանկարներով, գծապատկերներով, սխեմաներով, դիագրամներով և այլն (Манукян, 2009, Սվաջյան և ուրիշներ, 2020): ▪ Համագործակցեք սուրդոմանկավարժի հետ:
Եթե երեխան ունի մտավոր/ինտելեկտուալ խնդիրներ	
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	▪ Աջակցեք ուսուցչին պարզեցնելու և հարմարեցնելու հանրակրթական առարկայական ծրագրերը: ▪ Պարզեցրեք բարդ կամ վերացական

հասկացությունները, իսկ առաջադրանքները, անհրաժեշտության դեպքում, բաժանեք մասերի:

- Երբ պետք է՝ կրկնեք առաջադրանքների պահանջները՝ դրանք ձևակերպելով պարզ, հստակ շեշտադրումներով և համապատասխան առոգանությամբ:
- Օգտագործեք խաղային հնարներ և միջոցներ սովորողի հետաքրքրությունը և շահագրգռվածությունը բարձրացնելու համար:
- Օգնեք սովորողին կառավարել ժամանակը առաջադրանքները կատարելու և ավարտին հասցնելու համար՝ թույլ տալով դրանք ինքնուրույն կատարել:
- Օգտագործեք պատկերազարդ գրքեր, որոնք սովորողին կմոտիվացնեն կարդալ:
- Ընդգծեք տողերը գունավոր մատիտներով կամ օգտագործեք քանոն, որպեսզի սովորողը կարողանա պահպանել ուշադրությունը:
- Օգտագործեք ընթերցանության կամ գրի ուղղորդիչներ՝ տպագիր տեքստի տեսանելի մակերեսը փոքրացնելու կամ սովորողներին տողի վրա գրելու հմտությունը սովորեցնելու համար (ուղղորդիչներ կարող եք պատրաստել թղթից կամ ստվարաթղթից՝ դրա վրա կտրելով ուղղանկյունաձև անցք այնպես, որ երևա ամբողջ տեքստից միայն մեկ տող կամ մեկ բառ):
- Տրամադրեք առաջադրանքի արդեն կատարված մեկ օրինակ կամ՝ դրանցից մեկը կատարեք սովորողի հետ միասին:
- Դադարներ սահմանեք յուրաքանչյուր առաջադրանքից հետո, որպեսզի սովորողը կարողանա նախապատ-րաստվել հաջորդին:
- Նախապես զգուշացրեք սովորողին նոր գործունեության

մասին, օգնեք նրան նախապատրաստվել, ներկայացրեք գործողությունների պլանը, առաջադրանքը կատարելու սխեման, հատկացված ժամանակը և այլն (Teaching Children with Disabilities in Inclusive Settings. Bangkok: UNESCO Bangkok, 2009):

- Սովորեցրեք օգտագործել լրացուցիչ տեղեկատվություն և նյութեր (բառարաններ, դասագրքեր, ձեռնարկներ, բազմապատկման աղյուսակ, քաշը, երկարությունը, ժամանակը չափելու աղյուսակներ, բանաձևերի քարտեր, հաշվիչ և այլն):
- Սովորեցրեք մտապահելու ռազմավարություններ, ինչպես օրինակ՝ կրկին հարցնել, հստակեցնել, պահանջել ավելի կոնկրետ, ավելի մանրամասն տեղեկություններ:
- Օգնեք ստեղծել ասոցիացիաներ, որոնք շաղկապում են տարբեր մանրամասներ և դրանք ավելի հիշարժան դարձնում:
- Օգտագործեք գույներ. սովորեցրեք երեխաներին օգտագործել գունավոր գրիչներ գունային ծածկագրերի կամ բառերի նշումների համար կարևոր տեղեկատվությունն ընդգծելու համար (Трошин, 2015):
- Օգտագործեք նկարներ, պաստառներ, սխեմաներ ուսումնասիրվող նյութն ավելի տպավորիչ դարձնելու և ընկալման գործընթացը հեշտացնելու համար:
- Օգտագործեք բազմազան միջոցներ և պարագաներ բոլոր զգայարանների ակտիվ աշխատանքը խթանելու համար, ինչպես, օրինակ, նկարներ, դիագրամներ, պաստառներ, աղյուսակներ, տեսանյութեր, ձայնագրություններ և այլն:
- Կիրառեք հարմարեցված դասագրքեր, տեսադասեր, տեսաֆիլմեր, աուդիոգրքեր (Սվաջյան և ուրիշներ,

	2020):
Միջավայրային հարմարեցումներ	▪ Խրախուսեք սովորողի ինքնուրույնությունը և պարգևատրեք նրան: ▪ Նվազեցրեք շրջակա միջավայրից եկող շեղող ազդակների քանակը: ▪ Մշակեք և կիրառեք ոչ խոսքային ազդանշաններ դասի կամ յուրաքանչյուր այլ գործողության մեկնարկն ազդարարելու կամ աննկատ հուշումներ և զգուշացումներ կատարելու համար, օրինակ՝ ձեռքի զանգ, ծափ, թակոց, երաժշտություն, ժեստեր, կպչուն թղթեր, հայացք կամ դիմախաղ և այլն: ▪ Սահմանեք հստակ օրակարգ և գործողությունների պլան՝ օգտագործելով սովորողին հասանելի և հասկանալի միջոցներ (օրինակ՝ գործողությունները հուշող նկարներ, բառեր, սմարթ հեռախոսներ, անհատական օրագրեր), դա հնարավորություն է տալիս նրանց նախապես տեղեկացված լինել գործողությունների պլանին և ավելի հեշտ հարմարվել սպասվող փոփոխություններին, ինչպիսիք են, օրինակ՝ միջավայրի, ուսուցիչների կամ առարկայական դասաժամերի փոփոխումը (Teaching Children with Disabilities in Inclusive Settings. Bangkok: UNESCO Bangkok, 2009): ▪ Ընտրեք աշակերտական սեղանների դասավորության լավագույն տարբերակը՝ հաշվի առնելով սովորողի առանձնահատկությունները (օրինակ՝ եթե աղմուկը բացասական ազդեցություն ունի, սովորողին նստեցրեք պատուհաններից և դռներից հեռու, կամ՝ եթե սովորողը չի ուզում, որպեսզի դասընկերները տեսնեն իր կրկնվող շարժումները, նյարդային կծկումները, հնարավորության դեպքում դասարանը կահավորեք անհատական

	սեղաններով): ▪ Փորձեք կիրառել աջակցող սարքեր ու տեխնոլոգիաներ, որոնք կարող են օգնել սովորողին հաղթահարել մաթեմատիկական դժվարությունները և ամրապնդել թվի հասկացումը (հաշվիչներ, գրաֆիկական թուղթ, մատիտներ սխալները ջնջելու համար, հեռախոսային հիշեցումներ ու զարթուցիչներ, որոնք կօգնեն սովորողին հետևել ժամանակին, մաթեմատիկական ծրագրեր և խաղեր, որոնք թույլ կտան հետաքրքիր և զվարճալի ձևով զարգացնել հիմնական հմտությունները): ▪ Սովորողի կյանքում ներառեք խնամք և հոգածություն պահանջող գործողություններ (օրինակ՝ կարելի է սովորողին խնդրել, որ նա ամեն երկուշաբթի ջրի ծաղիկները, կամ ամեն օր դասավորի նստարանները): Համագործակցեք աջակցման թիմի մասնագետների հետ (Սվաջյան և ուրիշներ, 2020, Տիքա և ուրիշներ, 2018):
Եթե երեխան ունի շարժունակության հետ կապված խնդիրներ	
Ուսումնական գործընթացի հարմարեցումներ	▪ Խրախուսեք սովորողի կողմից կատարված աշխատանքը: ▪ Կրկնեք առաջադրանքը բոլոր անհրաժեշտ դեպքերում: ▪ Օգնեք սովորողին կառավարել ժամանակը՝ առաջադրանքները կատարելու և ավարտին հասցնելու համար՝ ապահովելով կարճ դադարներ գերլարվածություն չառաջացնելու նպատակով: ▪ Դասապրոցեսի ընթացքում կիրառվող դադարները համալրեք մկանների զարգացմանը նպաստող վարժություններով: ▪ Նախատեսեք ձևանմուշներ առաջադրանքների

	կատարումը հեշտացնելու նպատակով (Гилевич и др., 1997):
Միջավայրային հարմարեցումներ	▪ Ապահովեք, որ շարժունակության խանգարումներ ունեցող աշակերտը դասարանում կարողանա հեշտությամբ և անվնաս տեղաշարժվել, օգտվել գրատախտակից, պահարաններում դրված գրենական պիտույքներից: ▪ Նստեցրեք սովորողին այն շարքում, որտեղից նա հեշտությամբ կարող է տեղաշարժվել՝ չխանգարելով դասապրոցեսը: ▪ Ուսումնասիրեք և դիտարկման ընթացքում բացահայտեք, թե որ դիրքն է սովորողին հարմար դաս պատասխանելիս (կանգնած, նստած և այլն): ▪ Տրամադրեք սովորողի կարիքներին համապատասխան անհատական հարմարեցումներ: ▪ Կիրառեք համակարգիչը որպես աշխատանքային գործիք, եթե երեխան չի կարողանում բռնել գրիչ կամ մատիտ: ▪ Կիրառեք այնպիսի դիդակտիկ պարագաներ, որոնք երեխան հեշտությամբ կարող է վերցնել, բռնել, օգտագործել: ▪ Նստարանին ամրացրեք գրիչը, մատիտը, որպեսզի դրանք անընդհատ չընկնեն և միշտ հասանելի լինեն սովորողին: ▪ Համագործակցեք աջակցման թիմի մասնագետների հետ (Teaching Children with Disabilities in Inclusive Settings. Bangkok: UNESCO Bangkok, 2009):

➤ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴ 3

Անկաշկանդ եղեք և մի վախեցեք առաջարկել ուսուցիչներին փորձարկել նոր գաղափարներ, կիրառել նոր մեթոդներ:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականների հիմնական դերը մինչ օրս սահմանափակվում է դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո ԿԱՊԿ ունեցող սովորողներին տրամադրվող աջակցությամբ: Հարկ է նշել սակայն, որ նա կարևոր դերակատարում ունի բոլոր սովորողներին որակյալ կրթություն տրամադրելու գործում:

Ուսուցչի օգնականի առկայության դեպքում, ուսուցիչը հնարավորություն է ունենում դասն անցկացնել նվազագույն ընդմիջումներով, իսկ երբեմն էլ՝ առանց դրանց՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի առավելագույն յուրացումը: Ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին և սովորողներին՝ իրենց կրթական և սոցիալական զարգացման գործում, ինչպես դասարանում, այնպես էլ՝ դրանից դուրս (աղյուսակ 4):

Որպես ուսուցչին աջակցող՝ ուսուցչի օգնականը պետք է.

- իրականացնի անհրաժեշտ դիտարկումներ և այդ դիտարկումների արդյունքում սովորողների խնդիրների, առաջընթացի, ձեռքբերումների մասին հավաքագրված տվյալները տրամադրի ուսուցչին՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելով օբյեկտիվ և ճշգրիտ հաշվետվություններ:
- Աջակցի ուսուցչին սովորողների վարքը կառավարելիս:
- Տրամադրի տեխնիկական աջակցություն, օրինակ՝ նյութերի պատճենահանում, տպում, լրացում և այլն:
- Աջակցի դասասենյակը դասերի համար

նախապատրաստելու հարցում՝ ստեղծելով և պահպանելով դասի պլաններին համապատասխան օժանդակ միջավայր:

- Աջակցի ուսումնական գործունեության պլանավորմանը (Sharples, Webster, Blatchford, 2015):

Ավելի լավ պատկերացնելու համար, թե ինչ կարող են ակնկալել ուսուցչի օգնականը և ուսուցիչը միմյանցից, անհրաժեշտ է ճանաչել, թե որոնք են նրանց համակարգված և տարբերակված դերերը (Basso, McCoy 2007; Sharples, Webster, Blatchford, 2015; Խաչատրյան, 2020):

Աղյուսակ 4. *Ուսուցչի և ուսուցչի օգնականի դերերի տարբերությունները*

Ուսուցիչ	Ուսուցչի օգնական
Դասից առաջ	
Նախապես ներկայացրեք ուսուցչի օգնականին դասի բովանդակությունը և այն ակնկալիքները, որոնք սպասում եք իրենից (հավելված 4):	Համոզվեք, որ գիտեք, թե ինչի մասին է լինելու դասը:
Տրամադրեք դասի պլանն ուսուցչի օգնականին:	Սովորողների հետ աշխատանք իրականացնելիս կիրառեք ուսուցչի կողմից առաջարկված ուսուցման մեթոդները և ռազմավարությունները:
Նախապես տեղեկացեք՝ արդյո՞ք ուսուցչի օգնականը նախապատրաս-տել է դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերը:	Պարզեք՝ արդյո՞ք դասապրոցեսի համար անհրաժեշտ են ուսումնամեթոդական խթանիչ նյութերը:
Դասի սկիզբ	
Ներկայացրե՛ք դասի նպատակը և հաջողության հասնելու չափանիշները ուսուցչի օգնականին (ի՞նչ են	Պարզեք՝ կա՞ արդյոք սովորող կամ սովորողների մի խումբ, ովքեր տվյալ թեմայի շրջանակներում ներածության

աշակերտները սովորելու և ի՞նչ են անելու):	կարիք չունեն, և անհրաժեշտ է դասը վարել առանց ներածական մասի:
Դասի ընթացք	
Հստակեցրեք, թե դասարանի որ հատվածում պետք է լինի ուսուցչի օգնականը:	Կենտրոնացեք ոչ թե ուսուցչի, այլ սովորողների վրա, որովհետև արդեն գիտեք, թե ինչի մասին է դասը:
Նստեցրեք սովորողներին այնպես, որպեսզի ուսուցչի օգնականը հեշտությամբ կարողանա տեղաշարժվել դասարանի տարբեր հատվածներում:	Նստեք այն սովորողի կամ սովորողների կողքին, ովքեր ունեն լսելու կամ կենտրոնանալու դժվարություն:
Մի սպասեք, որ ուսուցչի օգնականը տևական ժամանակ կենտրոնացած պահի սովորողների ուշադրությունը ծավալուն կամ դասի առանցքից շեղող նյութի վրա:	Կրկնեք հիմնական կետերը փոքր խմբերով սովորողների համար, աշխատեք առանձին սովորողների հետ՝ մինչ ուսուցիչն աշխատում է ամբողջ դասարանի հետ:
Աշխատանք սովորողի կամ փոքր խմբի հետ	
Համոզվեք, որ ուսուցչի օգնականը գիտի, թե դասարանի որ հատվածում պետք է աշխատի և ինչպիսի ուսումնաօժանդակ պարագաներ են անհրաժեշտ լինելու:	Հստակեցրեք, թե որտեղ եք աշխատելու սովորողի կամ տվյալ խմբի հետ և ինչպիսի ուսումնաօժանդակ միջոցների կարիք եք ունենալու:
Համոզվեք, որ ուսուցչի օգնականը գիտի, թե ինչու և ինչպիսի աջակցություն պետք է տրամադրել սովորողին կամ խմբին:	Հստակեցրեք, թե ինչու եք աշխատում սովորողի կամ տվյալ խմբի հետ և ինչպիսի աջակցություն եք տրամադրելու նրանց:
Աջակցություն սովորողներին իրենց աշխատանքում	
Ուսուցչի օգնականի հետ քննարկեք դասի նպատակը:	Հարցեր տվեք ձեր աշակերտին ստուգելու համար՝ արդյո՞ք հասկանում է:

Ցույց տվեք ուսուցչի օգնականին սովորողների հետ աշխատանքում հաջողության հասնելու չափանիշները:	Խրախուսեք սովորողներին չխուսափել պատասխաններ տալուց:
Համոզվեք, որ ուսուցչի օգնականը գիտի, թե ինչն է առաջնահերթ առաջադրանքի կատարման ավարտից հետո, «հաջորդական քայլերը» մատչելի դարձրեք ուսուցչի օգնականի համար:	Համոզվեք, որ սովորողը կատարում է աշխատանքը, հարցեր տվեք, որպեսզի կարողանան առաջ շարժվել և հետևել քայլերի հաջորդականությանը:
Խմբային քննարկում	
Նախապես պարզեք՝ կա՞ն արդյոք խմբեր, որոնց կարիքները տարբեր են, և արդյո՞ք ուսուցչի օգնականը կարող է խմբին տրամադրել տարբերակված մոտեցում:	Նախապես պարզեք, թե ինչու եք աշխատում տվյալ խմբի հետ և ինչպիսի աջակցություն եք տրամադրելու սովորողներին:
Գրառումների վարում	
Կարգավորեք գրառումների վարման համակարգը, քննարկեք այն ուսուցչի օգնականի հետ: Ապահովեք ուսուցչի օգնականին գրառումների վարման համար անհրաժեշտ գործիքներով՝ թղթեր, նոթատետրեր կամ բջջային հավելված:	Նպաստեք սովորողների ամենօրյա առաջընթացի գրառումների պահպանմանը, մշտադիտարկումներին՝ օգտագործելով ուսուցչի կողմից առաջարկվող գործիքները և գրառումների վարման համակարգը:
Արտադասարանական միջոցառումներ	
Արտադասարանական միջոցառումների կազմակերպման ժամանակ տեղեկացրեք ուսուցչի օգնականին դրա նպատակի մասին և նշեք, թե ինչ աջակցություն եք ակնկալում:	Աջակցեք ուսուցիչներին արտադասա-րանական միջոցառումները կազմակերպելիս:

Ուսուցչի օգնականի հետ ստեղծեք համապատասխան միջավայր աշակերտների հետաքրքրությունների ձևավորման և ինքնադրսևորման համար:	Օժանդակեք ուսուցիչներին արտադասարանական միջոցառումների կազմկերպման և անցկացման համար անրաժեշտ նյութերի պատրաստման գործընթացում:
Ցուցումներ տվեք ուսուցչի օգնականին, թե ինչպես կարող է խթանել աշակերտների ստեղծագործական գործունեությունը արտադասարանական միջոցառումների ընթացքում:	Ուսուցչի հետ ամրապնդեք ուսումնական գործընթացում սովորողների կողմից ձեռքբերված գիտելիքները:

Բազմիցս արդեն նշել ենք, որ ուսուցչի օգնականի կողմից իրականացվող աշխատանքների մեծ մասն ուղղորդվում է ուսուցչի կողմից, սակայն կարևոր է, որ ուսուցչի օգնականը լինի նախաձեռնող, ճկուն և ստեղծագործ, որպեսզի իր գործունեությամբ աջակցի դասարանում, դպրոցում և, ընդհանրապես, հասակակիցների շրջանում սովորողների լիարժեք ներգրավմանը՝ դրանով իսկ նպաստելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացմանը:

Կրթական գործընթացում աջակցելով ուսուցչին՝ ուսուցչի օգնականը հանդես է գալիս որպես դասարանի օգնական և համատեղ դասավանդող, ինչպես նաև՝ ակտիվ մասնակցում է դասի պլանավորմանն ու ուսումնական ծրագրի արդյունավետ իրականացմանը:

I. Դասարանի օգնական

Գործելով որպես դասարանի օգնական՝ ուսուցչի օգնականը հնարավորություն է տալիս ուսուցիչներին առավելագույնս կենտրոնանալ սովորողներին ուսուցանելու և որպես դասավանդող ուսուցիչ իրեն առջև դրված խնդիրները լավագույնս հաղթահարելու:

Որպես դասարանի օգնական՝ ուսուցչի օգնականի ամենօրյա աշխատանքները և պարտականությունները կարող են տարբեր լինել՝ կախված դասարանից, սովորողներից, դասի թեմայից, ուսուցչի կողմից պլանավորված աշխատանքներից և այլն, սակայն կան որոշ կետեր, որոնք արդյունավետ կրթական գործընթաց ապահովելու համար ընդհանրական են և կարևոր (Nova Scotia, 2009):

Ակնհայտ է, որ դասի թեմային, սովորողների կարիքներին և կրթական պահանջմունքներին համապատասխան ուսումնական նյութերի ընտրությունը, ինչպես նաև դասասենյակի գույքի դասավորվածության ապահովումը դասապրոցեսի բարձր արդյունավետության նախապայմաններից է: Աջակցելով դասարանին՝ ուսուցչի օգնականը վերը նշվածի ուղղությամբ կարող է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- դասասենյակի ֆիզիկական միջավայրի պատրաստում նախքան դասի մեկնարկը (սեղաններ, աթոռներ, գրատախտակ, անհրաժեշտ այլ գույք):
- Տվյալ դասի համար բոլոր այն ուսումնական նյութերի առկայության ապահովում, որոնք նախապես համաձայնեցվել են ուսուցչի հետ:
- Դասի ընթացքում աշխատանքային նյութերի բաշխում և/կամ հավաքագրում, տարբեր առաջադրանքների համար սահմանված ժամանակի պահպանում (Tobin, 2006):

Բացի տեխնիկական աջակցություն ցուցաբերելուց, կարևոր է նաև ուսուցչի օգնականի դերը դասարանի ներսում առողջ համագործակցային և ընկերական հարաբերությունների ստեղծման և պահպանման, սովորողների սոցիալականացման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման գործընթացում: Ուսուցչի օգնականը բավականին շատ ժամանակ է անցկացնում դասարանի հետ՝ մասնակից լինելով տարբեր արշավների, ակումբների, ճամբարների և ակտիվ գործունեություն պահանջող այլ միջոցառումների: Այդ իսկ պատճառով, ինչպես ուսուցիչը, այնպես էլ ուսուցչի օգնականը լայն հնարավորություններ ունի նպաստելու

սովորողների սոցիալական հմտությունների, տարբեր իրավիճակներում համապատասխան հույզեր և վարք դրսևորելու կարողությունների զարգացմանը:

II. Համատեղ դասավանդող

Ուսուցչի օգնականների գործառույթների շրջանակն առավել հստակ է դառնում ուսուցման նոր ռազմավարության՝ համատեղ դասավանդման կիրառման դեպքում, որը կտրուկ հակադրվում է սովորողների ուսուցման ավանդական մոդելին: Այն տրամադրում է ուսուցչի օգնականներին ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում): Այս համագործակցությունը խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսին և դրանից հետո՝ ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին անհրաժեշտ աջակցություն ստանալ և բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն ունենալ, իսկ սովորողներին՝ ներգրավվածություն դասապրոցեսում, նյութի մատչելիություն և մանկավարժի անհատական մոտեցում ապահովել (Basso, McCoy, 2007):

Համատեղ դասավանդման հիմնական բաղադրիչն առնվազն 2 դասավանդող մասնագետների համագործակցված աշխատանքն է, որը ներառում է սովորողների բազմազանություն, դասի պլանավորում, համատեղ դասավանդում, գնահատում՝ ամբողջ դասաժամի օպտիմալ կիրառմամբ: Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ծրագրային նյութի յուրացման ավելի մեծ հնարավորությունների ընձեռում և այլն (MacDougall, 2017):

Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար.

- սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,
- ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,
- մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում,
- առաջադիմության ապահովում,

- անհատական կարիքների և անհրաժեշտ հարմարեցված միջավայրի ապահովում:

Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա (Shumway, 2011):

Համատեղ դասավանդման առավելություններն ուսուցիչների և համագործակցող մասնագետների համար.

- համագործակցության հմտությունների ընդլայնում,
- դիտարկելու և խնդրի լուծումը գտնելու այլընտրանքներ,
- դասավանդման այնպիսի մոտեցումների կիրառում որոնք միայնակ հնարավոր չէ իրականացնել,
- դասաժամի օպտիմալ օգտագործում,
- սովորողների կրթական կարիքների բավարարում,
- աջակցություն դասի պլանավորման և իրականացման բոլոր փուլերում,
- անհրաժեշտ տեխնիկական միջոցների, պարագաների և նյութերի համատեղ նախապատրաստում,
- միջավայրային խոչընոտների թիմային հաղթահարում,
- դասարանի առաջադիմության ապահովում,
- դասարանի կառավարման մոտեցումների կատարելագործում,
- ուսումնական պլանի առավելագույնս իրականացում,
- մետաճանաչողություն՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանում (Shumway, 2011):

Գծապատկեր 1. *Համատեղ դասավանդման մոդելները*



Համատեղ դասավանդումն իրականացվում է մի քանի տարբերակներով: Կիրառման մոդելն ընտրվում է ուսուցանվող թեմային և սովորողների բազմազանությանը համապատասխան: Մոդելներն ընտրվում են՝ հաշվի առնելով նաև, թե ովքեր են համատեղ աշխատելու, քանի որ դասավանդող ուսուցչի հետ համադասավանդող կարող է լինել ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, լոգոպեդը, այլ առարկայական

ուսուցիչները, ինչպես նաև ծնողները կամ սովորողները՝ հիմնականում բարձր դասարաններից (Wyly, 2018):

Տարբեր երկրներում կիրառվող համատեղ դասավանդման մոդելները բազմազան են, դրանք բոլորն էլ նպաստում են դասարանի կրթական մակարդակի բարձրացմանը, արդյունավետ ուսումնառության ապահովմանը և խթանում են սովորողների ակտիվ մասնակցությունը (Conderman, 2011):

Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

1. Աջակցող դասավանդում
2. Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում,
3. Զուգահեռ դասավանդում,
4. Այլընտրանքային դասավանդում,
5. Թիմային դասավանդում (գծապատկեր 1) (Տիքա և ուրիշներ, 2018):

Աջակցող դասավանդման մոդել



Այս մոդելի դեպքում ուսուցիչներից մեկը դասավանդում է՝ ստանձնելով դասարանի կառավարման դերը և տալով ընդհանուր առաջադրանքներ, իսկ երկրորդ ուսուցիչն (ուսուցչի օգնականը) օգնում է մյուսին, որպեսզի կարողանան հասնել համատեղ պլանավորած դասի նպատակին: Նախապես մշակված քայլերի միջոցով և անհատական ուղղորդումներով ուսուցչի օգնականը մոտենում է բոլոր այն սովորողներին, ովքեր ուսուցանվող նյութն ընկալելու, դասարանի կարգուկանոնին հետևելու և ինքնուրույն աշխատելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն՝ ապահովելով դասապրոցեսին առավելագույնս ներգրավվելու և հնարավորինս յուրացնելու նախատեսված նյութը: Այս մոդելը հնարավորություն է տալիս անհատական աջակցություն ցուցաբերել նաև ԿԱՊԿ ունեցող սովորողներին (Wyly, 2018, Տիքա և ուրիշներ, 2018):

Ուսուցման կայանների տեղափոխման դասավանդման մոդել



Դասավանդման այս ձևում սովորողներն աշխատում են փոքր խմբերով՝ հիմնականում ըստ սովորողների գիտելիքների և կարողությունների մակարդակի, պայմանականորեն դրանք կոչվում են ուսուցման կայաններ (օրինակ, ըստ առաջադրանքների տիպի)

(Դավթյան, Խաչատրյան, 2019): Դասարանում սեղանները վերադասավորվում են՝ կազմելով 3 առանձնացված կայաններ: Յուրաքանչյուր խումբն ունենում է իր առանձին նպատակը՝ կարողությունների մակարդակին համապատասխան, երբեմն նաև առանձին թեմա, եթե երկկազմ և եռակազմ դասարան է: Նախապես բաժանված խմբերն աշխատում են ուսուցման կայաններում նախօրոք ուսուցչից ստացած բանավոր կամ գրավոր հրահանգներով, աշխատանքային գործընթացն ինքնուրույն է կազմակերպվում, կամ էլ ուղղորդվում է ուսուցչի և ուսուցչի օգնականի կողմից, որոնք բաժանում են կայանները միմյանց միջև: Սովորողները դասի ընթացքում սահմանված որոշակի ժամանակահատվածում լինում են բոլոր երեք կայաններում, այսինքն՝ բոլոր երեք խմբերը դասի ընթացքում իրականացնում են նույն գործողությունները, սակայն՝ տարբեր ժամանակահատվածներում (Conderman, 2011, Տիքա և ուրիշներ, 2018):

Զուգահեռ դասավանդման մոդել



Երկու ուսուցիչները միասին են պլանավորում դասը, սակայն նրանցից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր խմբի ուսուցման արդյունավետության համար: Դասարանում ընթանում է զուգահեռ դասավանդում՝ երկու տարբեր խմբերով: Խմբերի բաժանման սկզբունքը, որպես կանոն, կախված է լինում սովորողների գիտելիքների կարողությունների մակարդակից կամ նրանց սովորելու ոճերի ընդհանրություններից: Յուրաքանչյուր ուսուցիչ իր խմբի հետ աշխատում է՝ կիրառելով իր ընտրած մոտեցումները, սակայն դասի նպատակը երկու խմբերում նույնն է: Սա առավել քիչ օգտագործվող մոդելներից է, որի կիրառման ժամանակ երկրորդ ուսուցիչը պետք է ուսուցանվող առարկայից գիտելիքներ ունենա (Տիքա և այլոք, 2018):

Այլընտրանքային դասավանդման մոդել



Այս մոդելի կիրառման ընթացքում դասարանում ձևավորվում է սովորողների երկու խումբ: Դասավանդող ուսուցիչներից մեկն աշխատում է սովորողների՝ քանակով ավելի մեծ խմբի հետ, իսկ երկրորդ դասավանդողը միևնույն ժամանակ աշխատում է մյուս՝ ավելի փոքր խմբի հետ՝ նույն թեմայի շուրջ նախապես համատեղ մշակված անհատական ծրագրով/պլանով: Սա հիմնականում

կիրառվում է այն սովորողների արդյունավետ ներգրավման ու դասավանդման համար, ովքեր ունեն ԿԱՊԿ: Մինչ մեծ խմբի հետ աշխատող ուսուցիչը հանձնարարում է սովորողներին գործնական կամ ինքնուրույն աշխատանք, մյուս ուսուցիչը փորձում է ուղղորդել և աջակցել սովորողներին վերհիշելու անցած նյութը և կատարել նախապես պլանավորած անհատական աշխատանքները: Այս տարբերակը կիրառվում է դասի մի փուլի ընթացքում, հիմնականում այս մոդելով նոր նյութ չի փոխանցվում սովորողներին (Դավթյան, Խաչատրյան, 2019, Տիքա և ուրիշներ, 2018):

Թիմային դասավանդման մոդել



Այս մոդելում դասավանդողներից մեկը սովորեցնում է դասի բովանդակային մասը, իսկ մյուսը լրացնում է նրան՝ միևնույն նպատակի շրջանակներում տալով հարցադրումներ, ծավալելով քննարկումներ կամ առաջարկելով գործնական աշխատանքներ սովորողների միևնույն խմբին: Դասավանդողները կարող են փոխվել դերերով կամ շարունակել այնպես, ինչպես սկսել են, շատ ավելի կարևոր է այս մոդելը նախապես պլանավորել առավել փոքր քայլերով, որպեսզի կարողանան սահուն կերպով միմյանց փոխլրացնել (Դավթյան, Խաչատրյան, 2019, Conderman, 2011):

Կարևոր է իմանալ՝ համատեղ դասավանդելը միշտ չէ, որ գործում է կատարյալ կերպով: Հիմնական նախադրյալն այն է, որ ուսուցիչները կարողանան միմյանց հետ ճիշտ համագործակցել, նույնիսկ այն դեպքերում, երբ նրանք ունենում են տարաձայնություններ՝ կապված դասավանդման մոդելի ընտրության, ռազմավարությունների մշակման կամ դերերի բաժանման հետ: Սկզբունքորեն կարևորվում է դասի համատեղ պլանավորումը, ինչպես նաև՝ սովորողների գնահատման և հետադարձ կապի տրամադրման փուլերի համաձայնեցված իրականացումը: Համատեղ դասավանդման հիմնական նպատակը բոլոր, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնառության որակի ապահովումն է նույն դասարանում (Basso, McCoy 2007; MacDougall, 2017; Տիքա և ուրիշներ, 2018):

III. Դասընթացի պլանավորման մասնակից

Դասի պլանավորումն արդյունավետ ուսուցման հիմնաքարերից մեկն է: Այն իրենից ներկայացնում է դասի մանրամասն նկարագրություն, որտեղ հստակ նշված է տվյալ դասի թեման, նպատակները, փուլային բաժանումները, իրականացվող աշխատանքները, անհրաժեշտ նյութերն ու պարագաները: Դասի արդյունավետ պլանավորման պատասխանատուն հանդիսանում է ուսուցիչը: Սակայն, լինելով ուսուցչի կողքին, ուսուցչի օգնականը կարող է իր ներդրումն ունենալ ուսուցման գործընթացի արդյունավետ պլանավորման և իրականացման գործում: Անհրաժեշտության դեպքում նա կարող է պատճենահանել կամ պատրաստել որոշակի նյութեր, ինչպես նաև կահավորել դասասենյակը՝ համալրելով այն բավարար քանակությամբ աշխատանքային նյութերով՝ թղթեր, սոսինձ, մկրատ, ներկեր կամ հատուկ պարագաներ, անձեռոցիկներ և այլն: Հարկ է նշել, որ սովորողներն ավելի լավ են ընկալում դասի թեման, երբ դասը նախապես պլանավորված է և մատուցման ժամանակ օգտագործվում են սովորողներին հասանելի նյութեր (աղյուսակ 5) (Sharples, Webster, Blatchford, 2015):

Աղյուսակ 5. *Արդյունավետ համագործակցության ընդհանուր դրույթները դասի պլանավորման և իրականացման ընթացքում*

Երբ	Ինչ
Նախապատ-րաստում դասին	• Պարզեք, թե ինչ կառուցվածք է ունենալու դասը: • Քննարկեք դասավանդման առավել արդյունավետ մեթոդների, հնարների, միջոցների և գիտելիքների ստուգման ձևերի ընտրությունը: • Տեղեկացեք յուրաքանչյուր սովորողի առանձնահատ-կությունների և կատարողականության առկա մակարդակի մասին: • Ծանոթացեք ուսումնական նյութին և այն անհատական աշխատանքներին, որոնք պատրաստվում եք իրականացնել: • Պլանավորեք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է տրամադրել առանձնահատուկ պայմանների կարիք

	ունեցող սովորողներին: • Ծանոթացեք դասի խնդիրներին և նպատակներին՝ կրթական, դաստիարակչական:
Դասի սկզբում	• Օգնեք ուսուցչին սովորողներին ներկայացնել դասի թեման և նպատակը, ինչպես նաև նախապատրաստել աշակերտներին նոր նյութի ընկալմանը: • Ապահովեք համապատասխան ուսումնական նյութերի և սարքավորումների առկայությունը/մատչելիությունը: • Օգնեք ուսուցչին՝ գրատախտակի վրա գրանցելով ուսուցչի կողմից թվարկված բանալի բառերը կամ քայլերը:
Դասի ընթացքում	• Դիտարկեք և գրառեք սովորողների ուսումնառության դժվարություններն ու ձեռքբերումները, և փոխանցեք ուսուցչին բանավոր կամ գրավոր գրառումների միջոցով: • Տեղեկացրեք ուսուցչին աջակցության կարիք ունեցող սովորողների դժվարությունների մասին: • Օգնեք ուսուցչին դասի ընթացքում իրականացնել համարժեք վերահսկողություն:
Խմբային աշխատանք-ների ժամանակ	• Անհրաժեշտության դեպքում համոզվեք՝ արդյո՞ք սովորողները հասկացել են առաջադրանքը, և ինչ է ակնկալվում իրենցից աշխատանքի ավարտին: • Յուրաքանչյուր խմբի առաջադրանքների կատարման ընթացքում օգնեք սովորողներին կառավարել ժամանակը, անհրաժեշտության դեպքում կրկնեք և պարզեցրեք հրահանգները: • Գրառեք դասի ընթացքում հանդիպող դժվարությունները, խնդիրները, որպեսզի ուսուցիչը կարողանա արդյունավետ լուծում առաջարկել: • Խրախուսեք սովորողների դրական, կառուցողական փոխհարաբերությունները միմյանց հետ: • Գրանցեք սովորողների պատասխանները, նշեք դժվարություններն ու ձեռքբերումները:

Սովորողների հետ անհատական աշխատանք-ների ժամանակ	• Պլանավորեք անհատական աշխատանքի կատարման ծավալը, ժամանակացույցը և հաջորդական քայլերը: • Քննարկելով ուսուցչի հետ՝ պարզեք, թե սովորողը ինչ կարողություններ և հմտություններ պետք է ունենա անհատական աշխատանքից հետո: • Գրանցեք այն սխալները, որոնք կրում են շարունակական բնույթ: • Հստակ սահմանեք, ձևակերպեք կատարվող առաջադրանքի հարցերը, առաջադրանքի պահանջները, և պարզեք՝ արդյո՞ք սովորողը հասկացել է պահանջը: • Հետևեք, որպեսզի ժամանակին սկսեն և ավարտեն աշխատանքները: • Կիրառեք դասավանդման արդյունավետ մեթոդներ, հնարներ: • Տեղեկացրեք սովորողին հաջորդ հանդիպմանն իր անելիքների մասին:
Դասի ավարտին	• Համոզվեք, որ սովորողները հասկացել են տնային առաջադրանքները և հստակ պատկերացնում ունեն իրենց անելիքների մասին: • Համոզվեք, որ տնային աշխատանքները գրանցված են օրագրերում: • Տեղեկացրեք ծնողներին սովորողների ուսուցման գործընթացի վերաբերյալ:
Դասից հետո	• Հետադարձ կապ տրամադրեք սովորողների ուսուցման կամ վարքի հետ կապված ցանկացած դժվարությունների և այլ հարցերի վերաբերյալ: • Օգնեք ուսուցչին նախապատրաստվել հաջորդ դասին և պատրաստել համապատասխան նյութերն ու պարագաները:

➤ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԵՎ ԴՊՐՈՑԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴ 7

Հիշեք, որ յուրաքանչյուր սովորող ունի ուսումնական նյութի ընկալման իր համար ամենաարդյունավետ միջոցները և յուրացման հնարավորությունները:

I. Աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը

Ուսուցումը տարբեր գործունեությունների ամբողջություն է, որի ընթացքում յուրաքանչյուր սովորող ձեռք է բերում բազմազան գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը միտված է բարձրացնելու սովորողների դերը սեփական կրթության մեջ, ապահովելու ուսուցման մատչելիությունը շնորհիվ տարբեր մեթոդների և հնարների կիրառման, ստեղծելու ավելի հարմարավետ պայմաններ՝ քննադատական մտածողության և ինքնարտահայտման համար (Առաքելյան, 2015): Այդ ամենը առաջ է բերում ուսուցման նոր միջավայրի, մեթոդների, անհրաժեշտ պարագաների մշակման, ուսումնական ծրագրի համապատասխան հարմարեցման անհրաժեշտություն: Այս աշխատանքների արդյունավետ կազմակերպման և իրականացման գործընթացում ուսուցչին օգնության է գալիս ուսուցչի օգականը: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն, անհրաժեշտ է ճիշտ ընտրել տվյալ դասին համապատասխան ուսուցման մեթոդը, քանի որ ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մեթոդի ճիշտ ընտրությունից և կիրառությունից: Մեթոդի ընտրությունը որպես կանոն պետք է բխի ուսուցանվող նյութի նպատակից, աշակերտների տարիքային և զարգացման առանձնահատկություններից: Այդ պատճառով շատ կարևոր է

ուսուցչի և ուսուցչի օգնականի համագործակցությունը ուսումնական ծրագրի շրջանակներում դրված նպատակներին համապատասխան մեթոդների և հնարների ընտրության հարցում (Thomas, 1992, Ենոքյան, 2018):

Բոլոր երեխաները առանձնահատուկ են, նրանք տարբերվում են իրենց բնավորությամբ, խառնվածքով, մտքի արագությամբ, շարժումներով, վարքային դրսևորումներով, շփման և հաղորդակցման ձևերով: Կրթության մեջ այս ամենը կարող է որոշակի դժվարություններ առաջացնել: Այդ դժվարությունները կարող են դրսևորվել կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս կամ շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելիս, ինչն էլ իր հերթին անդրադառնում է հանրակրթական ծրագրի յուրացման վրա: Ուսումնական ծրագրերը հստակ նպատակներ են սահմանում երեխաների կրթության համար, իսկ ուսուցիչներն ազատ են ընտրելու այն ուղիներն ու մեթոդները, որով կապահովեն այդ նպատակների հաղթահարումը (Lacey, 2001):

ԿԱՊԿ ունեցող սովորողների անհատական կրթական նպատակները սահմանվում են ԱՈՒՊ-ում, որը հանդիսանում է հիմնական գործիք՝ նրանց կրթական գործունեությունը պլանավորելու և իրականացնելու գործում: ԱՈՒՊ-ը մշակվում է սովորողի առանձնահատկությունների, կրթական կարիքների, ուժեղ կողմերի և հետաքրքրությունների հիման վրա՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ուսումնական բնագավառների համար[6]: Այս գործընթացում ուսուցչի օգնականը ուսուցչի անմիջական աջակիցն է[7]:

Ընդհանուր առմամբ ուսումնական ծրագրի իրականացման գործընթացին աջակցելու համար ուսուցչի օգնականն ուսուցչի հետ պլանավորում է ուսումնական գործընթացը, սահմանում գործունեության արդյունքների միջև պատճառահետևանքային կապերը, ընտրում և մշակում անհրաժեշտ մեթոդներ, հնարներ, դիդակտիկ պարագաներ:

[6] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն)

[7] «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1391-Ն

II. Աջակցություն դպրոցին

ԽՈՐՀՈՒՐԴ 8

Ակտիվ մասնակցություն ունեցեք դպրոցում իրականացվող բոլոր գործընթացներին և միջոցառումներին:

Ուսուցչի օգնականը կարևոր դեր ունի արդյունավետ կրթություն ապահովելու հարցում: Ուսուցչի օգնականի դերը դպրոցում շատ տարբեր է. այն սկսվում է ուսուցչին աջակցելու գործընթացից՝ դասի պլանավորում, անհրաժեշտ խորհուրդներ, ինչպես նաև արտադասարանական աշխատանքներից՝ դասամիջոցներ, դպրոցի բակ, ճաշի ժամեր և այլն, արտադպրոցական միջոցառումներից՝ ինչպիսիք են էքսկուրսիաները, արշավները, այցելությունները թանգարաններ, պատմական վայրեր և այլն: Պետք է միշտ հիշել, որ սովորողների կարողությունների, հմտությունների զարգացմանն ու կրթական գործընթացի բարելավմանը նպաստում է սերտ համագործակցությունը դպրոցի հետ առնչվող բոլոր օղակների միջև՝ ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետներ, ծնողներ, սովորողներ (Sharples, Webster, Blatchford, 2015; Sharma, Salend, 2016):

Ուսուցչի օգնականը շարունակաբար պետք է մասնակցի վերապատրաստման դասընթացների և սեմինարների, զարգացնի իր մասնագիտական կարողություններն ու հմտությունները, ճանաչի սեփական ուժեղ կողմերն ու փորձառության ոլորտները, և փոխանցի ձեռքբերված փորձն ու գիտելիքները գործընկերներին՝ սովորողների նվաճումներին և առաջընթացին աջակցելու նպատակով: Նա պետք է նաև ստեղծի կառուցողական հարաբերություններ և համագործակցի այլ գործընկեր կազմակերպությունների մասնագետների հետ, պահպանի շարունակական կապն ուսուցչի հետ: Կարևոր է նաև, որ ուսուցչի օգնականն իմանա ուսումնական հաստատության գույքի ընտրության և

դասավորության օրենքով սահմանված նորմերի մասին և հետևի տրված առաջարկներին (Hadwin, Wilcox, 2000):

Կարևոր է, որ ուսուցչի օգնականն իր աշխատանքով և գործունեությամբ աջակցի դպրոցին՝ հետևելով ընդունված քաղաքականությանը և ակտիվորեն առաջ մղելով բազմազանության, հավասարության, ներառականության վերաբերյալ հիմնարար գաղափարները: Նա պետք է ընդունի և նպաստի այդ գաղափարների վրա հիմնված կրթության կազմակերպմանը և իրականացմանը՝ մասնակցելով յուրաքանչյուր սովորողի համար մատչելի միջավայրի, սովորելու և զարգանալու հավասար հնարավորությունների ստեղծման գործընթացին:

Ուսումնական հաստատությունը պետք է լինի այն միջավայրը, որտեղ բազմազանության, հավասարության, հանդուրժողականության գաղափարախոսության ընդունումը կնպաստի բոլոր սովորողների կրթության արդյունավետ կազմակերպմանը, դասապրոցեսին և դպրոցում կազմակերպված միջոցառումներին նրանց ակտիվ մասնակցությանը, սոցիալիզացիային և կնախապատրաստի նրանց հետագա կյանքին:

ՄԱՍ 3.

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԽՈՐՀՈՒՐԴ 9

Նախաձեռնեք համագործակցություն և իրականացրեք արդյունավետ թիմային աշխատանք կրթության մեջ ներգրավված բոլոր կողմերի հետ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմի արդյունավետ թիմային աշխատանքը և համագործակցությունը ծնողների հետ շատ կարևոր է, քանի որ դա է հանդիսանում դպրոցի անխափան աշխատանքի, արդյունավետ կրթության և դաստիարակության իրականացման հիմքը:

Արդյունավետ կրթական գործընթացի հիմքում ընկած է համագործակցությունն այդ գործընթացին մասնակից բոլոր օղակների միջև, ինչը նպաստում է ինչպես ուսուցման, այնպես էլ ուսումնառության որակի բարձրացմանը, բոլոր երեխաների կրթական կարիքների բավարարմանը:

Ուսուցչի օգնականը համեմատաբար նոր օղակ է կրթական գործընթացի մասնակիցների շարքում և ունի հստակ սահմանված անելիքներ: Նա համագործակցում է համապատասխան մասնագետների և/կամ ուսուցիչների հետ՝ մասնակցելով ստորև ներկայացված գործընթացներին.

- դպրոցական մակարդակի գնահատում,
- կանխարգելիչ միջամտությունների պլանի մշակում,
- ԿԱՊԿ-ի տարածքային մակարդակի գնահատում,
- ԱՈՒՊ-ի մշակում և վարում,
- մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում,
- համագործակցություն ծնողի հետ:

Ուսուցչի օգնականի համագործակցությունը կրթական գործընթացին մասնակից բոլոր օղակների հետ ենթադրում է համատեղ աշխատանք, որը միտված է ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացմանը՝ դասավանդման ճկուն և բազմազան մեթոդների, այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառման, անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակման միջոցով: Հարկ է նշել, որ այդ համագործակցությունը չի սկսվում և ավարտվում կողք-կողքի իրականացվող աշխատանքով: Միասին պլանավորելով և համաձայնության գալով այն աշխատանքների շուրջ, որոնք անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր դասարանի, կոնկրետ սովորողի կամ սովորողների խմբի հետ՝ ուսուցչի օգնականն արդեն սահմանված նպատակների շրջանակում իրականացնում է աշխատանքներ դասամիջոցներին, գրադարանում, համակարգչային սենյակում և



այլն՝ ապահովելով ուսուցչի և աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների կողմից իրականացվող աշխատանքների շարունակականությունը (Tatum, 2017):

I. Ուսուցչի օգնականի համագործակցությունն ուսուցչի և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ դպրոցական մակարդակի գնահատման գործընթացում

Երեխայի զարգացումն անընդհատ և շարունակական գործընթաց է, իսկ նրան շրջապատող միջավայրն այն կարևոր բաղադրիչներից մեկը, որը կարող է նպաստել կամ խոչընդոտել զարգացման գործընթացին: Երեխայի բնականոն զարգացման գործընթացը խթանելու, լրացուցիչ աջակցությունների տեսակները պարզելու, ուսուցման գործընթացը ճիշտ պլանավորելու, կազմակերպելու և իրականացնելու համար շատ կարևոր է հստակ պատկերացում ունենալ նրա կարողությունների, հնարավորությունների և կարիքների մասին: Այս ամենի մասին հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է իրականացնել գնահատում դպրոցական մակարդակում[8]: ԿԱՊԿ-ի գնահատումն ինքնին համագործակցային գործընթաց է, և ուսուցչի օգնականի դերը դրանում ևս շատ կարևոր է:

Գնահատման գործընթացը դպրոցական մակարդում սկսվում է դիտարկումով, որն իրականացվում է սովորողի բնական միջավայրում՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ (Ասրյան և ուրիշներ, 2018):

Ուսուցչի օգնականը, որպես դիտարկում իրականացնող անձ, համագործակցելով դասվար/դասղեկի, դասավանդող այլ ուսուցիչների, դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և սովորողի ծնողների հետ՝ որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն սովորողի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերությունների, միջավայրային հարմարեցումների և այլնի մասին: Այդպիսի տեղեկատվություն հնարավոր է հավաքագրել միայն

[8] «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 370-Ն հրաման

օբյեկտիվ դիտարկում իրականացնելու միջոցով՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը սովորողի նկատմամբ:

Սովորողի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունն ուսուցչի օգնականը վերլուծում և քննարկում է ուսուցիչների, աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների և ծնողի հետ: Այս ամենը հնարավորություն է տալիս հետագա ուսումնառությունը պլանավորել և իրականացնել սովորողի կարողություններին, դժվարություններին և կրթական պահանջմունքներին համապատասխան:

Դիտարկման արդյունքներն օգնում են լրացնելու դպրոցական մակարդակի գնահատման գործընթացում կիրառվող «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը՝ հնարավորություն տալով բացահայտելու սովորողին անհրաժեշտ աջակցության չափը: Նշված գործիքի արդյունքներն արձանագրվում են «Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ» ձևաթղթում, որի ընթացքում ևս ուսուցչի օգնականը սերտորեն համագործակցում է ուսուցչի հետ:

Դիտարկման օբյեկտիվությունն ապահովելու համար անհրաժեշտ է արդյունքներն արձանագրել անմիջապես դիտարկման ընթացքում, ինչի համար նպատակահարմար է կիրառել դիտարկման արդյունքների ամփոփաթերթ (հավելված 5):

II. Ուսուցչի օգնականի գործունեությունը Կանխարգելիչ միջամտությունների պլանի մշակման գործընթացում

Եթե սովորողի ԿԱՊԿ-ի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի վկայում սովորողի որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, սակայն նրա մոտ նկատվում են որոշակի դժվարություններ, որոնք խոչընդոտում են բնականոն ուսուցման գործընթացին, ապա գնահատող խումբը մշակում է «Կանխարգելիչ միջամտությունների պլան»՝ կիսամյակային կտրվածքով՝ լրացուցիչ աջակցություն կամ հարմարեցումներ տրամադրելու համար: Անհերքելի է այն, որ ցանկացած դժվարություն, որի առաջ կանգնում է երեխան, հնարավոր է հաղթահարել, եթե համագործակցում են բոլոր այն անձինք, ովքեր այս կամ այն կերպ կապ ունեն նրա հետ:

Դպրոցական մակարդակում ծառայությունները տրամադրվում են հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչների, ուսուցչի օգնականների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի կողմից: ԿԱՊԿ ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը և տրամադրման գրաֆիկը մշակում է հաստատության աջակցման խումբը՝ ներառյալ ուսուցիչները և ուսուցչի օգնականը:

Սովորողի մոտ առկա դժվարությունները հաղթահարելու համար ուսուցիչը, համագործակցելով ուսուցչի օգնականի հետ, պետք է սահմանի նպատակներ, դեպի այդ նպատակները տանող քայլեր, ընտրի դասավանդման արդյունավետ մեթոդներ և ռազմավարություններ, ապահովի անհրաժեշտ միջավայրային հարմարեցումներ և այլն: Պետք է հիշել, որ ուսուցման գործընթացում աշխատանքների հիմնական մասը սովորողի հետ իրականացվում է դասարանում, սակայն, հաճախ ուսուցիչները հայտնվում են դժվար իրավիճակում, երբ իրենց ունեցած ռեսուրսները, գիտելիքները, հմտությունները և փորձը հնարավորություն չեն տալիս բավարարելու յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները: Այս դժվարությունները հաղթահարելու գործընթացում ուսուցչի օգնականները հանդիսանում են ուսուցիչների անմիջական աջակիցները. ակտիվ մասնակցում են սովորողի համար սահմանված տարեկան նպատակներին և խնդիրներին ուղղված գործողությունների իրականացման գործընթացին: Հիմք ընդունելով իր կողմից իրականացված դիտարկման արդյունքները, ծնողներից հավաքագրված տվյալները՝ ուսուցչի օգնականն առաջարկում է այն միջավայրային հարմարեցումները, որոնք դրական ազդեցություն կարող են ունենալ սովորողի ակտիվության և մասնակցության վրա: Բոլոր այն հարմարեցումները, որոնք համատեղ քննարկման արդյունքում առանձնացվում են որպես կարևոր և անհրաժեշտ՝ լրացվում են «Կանխարգելիչ միջամտությունների պլանի» համապատասխան բաժնում:

III. Ուսուցչի օգնականի համագործակցությունը տարածքային մակարդակի գնահատում իրականացնող մասնագետների հետ

Երեխայի ԿԱՊԿ-ի գնահատման գործընթացը տարածքային մակարդակում սկսվում է այն դեպքում, երբ դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի որևէ ֆունկցիայի խանգարման

հավանականություն, ապա ուսումնական հաստատությունը, ծնողի համաձայնությամբ, դիմում է ՏՄԱԿ՝ տարածքային մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով[9]:

Տարածքային մակարդակում երեխայի ԿԱՊԿ-ի գնահատումը մասնակցային գործընթաց է, որն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը կամ խնամակալը, դպրոցի և ՏՄԱԿ-ի աջակցության խումբը, այդ թվում՝ ուսուցիչները և ուսուցչի օգնականները:

Ուսուցչի օգնականը՝ որպես ԿԱՊԿ-ի գնահատման գործընթացի մասնակից, աջակցում է տարածքային մանկավարժահոգեբանական գնահատման խմբին՝ ներկայացնելով իր կողմից իրականացված դիտարկումների և աշխատանքների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը տվյալ սովորողի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերությունների, միջավայրային հարմարեցումների, արդյունավետ ռազմավարությունների, դասապրոցեսում և ընդմիջումների ժամանակ սովորողի ակտիվության և մասնակցության մասին:

Կարևոր է նաև ուսուցչի օգնականի մասնակցությունը ԿԱՊԿ-ի տարածքային մակարդակի գնահատման գործընթացում իրականացվող գնահատող թիմի առաջին և երկրորդ հանդիպումներին (Կատինյան, 2018):

IV. Ուսուցչի օգնականի համագործակցությունն ուսուցչի հետ ԱՈՒՊ-ի մշակման և վարման գործընթացում

ՏՄԱԿ-ի կողմից սահմանված կարգով գնահատված և ԿԱՊԿ ունեցող այն սովորողների համար, ովքեր «Հանրակրթության պետական չափորոշչով» սահմանված հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները յուրացնելիս ունեն կայուն դժվարություններ և առանց անհրաժեշտ ծրագային պարզեցումների և հարմարեցումների չեն կարողանում հասնել իրենց կրթական նպատակներին՝ մշակվում է ԱՈՒՊ (Թադևոսյան, 2016) ԱՈՒՊ-ը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի

[9] «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 370-Ն հրաման

և երեխայի ԿԱՊԿ-ի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները)»[10]:

ԿԱՊԿ ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթությունը կազմակերպվում է նրա ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներին համապատասխան:

ԱՈՒՊ-ի մշակումը համագործակցային գործընթաց է, որին մասնակցում են տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականը, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն տրամադրող մասնագետները, ինչպես նաև ծնողը:

Ուսուցչի օգնականը, հանդիսանալով ուսուցչի անմիջական աջակիցը, օգնում է նրան ԱՈՒՊ-ի մշակման և վարման գործընթացում: Ուսուցչի օգնականը տվյալ սովորողի առարկայական ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին և ծնողին տեղեկատվություն է տրամադրում նախկինում կիրառված արդյունավետ ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների մասին, ուսուցիչների հետ միասին իրականացնում է հավաքագրված տեղեկատվության վերլուծություն, որի արդյունքում ամբողջացվում են սովորողի կարիքների մասին պատկերացումները, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս ուսուցչին առավել արդյունավետ կազմակերպել սովորողի ուսուցումը ԱՈՒՊ-ով: Որպես մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամ՝ մշտապես մասնակցում է սովորողի ԱՈՒՊ-ի մշտադիտարկման, ընթացիկ, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման աշխատանքներին:

Ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցիչներին ԿԱՊԿ ունեցող սովորողի համար ԱՈԻՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում՝ պատրաստելով անհրաժեշտ ուսումնական նյութեր, կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ[11]:

V. Ուսուցչի օգնականի համագործակցությունը մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող այլ անդամների հետ

[10] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն)

[11] «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1391-Ն

Սովորողի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման, նրա զարգացման բնականոն ընթացքի խթանման, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման գործընթացների արդյունավետության բարձրացման համար կարևոր է ուսուցչի օգնականի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների միջև համագործակցությունը: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որպեսզի ուսուցչի օգնականը և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները կազմակերպեն պլանավորված կանոնավոր հանդիպումներ: Նման հանդիպումները հնարավորություն են տալիս միմյանց հետ փոխանակվել սովորողի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկատվությամբ, կիսվել իրականացվող աշխատանքների ընթացքում արձանագրված հաջողություններով, արդյունավետ ռազմավարություններով, ինչպես նաև միասին վերլուծել սովորողի դժվարությունները կամ առաջացած խոչընդոտները:

Ուսուցչի օգնականը՝ որպես մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամ, մասնակցում է աջակցության ծառայությունների արդյունավետության գնահատման գործընթացին՝ ներկայացնելով դասապրոցեսում և ընդմիջումների ժամանակ սովորողի ակտիվության և մասնակցության մակարդակի այն փոփոխությունները, որոնք նա արձանագրել է իր կողմից իրականացվող դիտարկումների արդյունքում:

VI. Ուսուցչի օգնականի համագործակցությունը ծնողի հետ

Սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացում մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության հնարավոր չէ երեխայի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և իրականացումը: Երեխայի զարգացման գործընթացում ծնողն այն կարևորագույն օղակն է, ում ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը կրթական գործընթացին դրական անդրադարձ է ունենում սովորողի զարգացման, սոցիալականացման և առաջադիմության վրա: Այս համագործակցության ընթացքում ուսուցչի օգնականը ևս, պետք է նպաստի դպրոցական միջավայրում ծնողների ներգրավմանը՝ հնարավորություն տալով նրանց մասնակցել դպրոցի կողմից նախատեսված միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը,

ինչպես նաև երեխայի կրթության մասին որոշումների կայացմանը՝ հանդես գալով որպես լիիրավ գործընկեր (Սվաջյան և ուրիշներ, 2020):

Ուսուցչի օգնականը՝ որպես համագործակցող կողմ, անհրաժեշտության դեպքում պետք է կազմակերպի հանդիպումներ ծնողների հետ՝ տեղեկատվության փոխանակման և աշխատանքների ներկայացման նպատակով, տրամադրի խորհրդատվություն առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների և դժվարությունների հաղթահարման գործընթացում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կառավարության
14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն որոշում՝
«Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին»

XIV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ

1. Պաշտոնային պարտականությունները՝

1) օգնում է ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում,

2) աջակցում է ԱՈՒՊ-ի իրականացմանը՝ համագործակցելով տվյալ սովորողին դասավանդող ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրողների և ծնողների հետ,

3) աջակցում է ուսուցիչներին հանրակրթության պետական չափորոշիչով և առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով, իսկ ԿԱՊԿ ունեցող սովորողի համար՝ ԱՈՒՊ-ով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացներում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ,

4) ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնում է սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարում վերլուծություններ,

5) օժանդակում է ուսուցիչներին բոլոր, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում,

6) մասնակցում է ուսուցչի կողմից դասերի պլանավորման աշխատանքներին.
7) ուսուցիչների հետ միասին բացահայտում, դիտարկում, հետազոտում է երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները,
8) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը.
9) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,
10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
11) մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին,
12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները,
13) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) հայտի հիման վրա, սոցիալական դեպքի վարման շրջանակներում, մասնակցում է համակարգող և խորհրդատվական մարմինների, ինչպես նաև աջակցության խմբի աշխատանքներին,
14) մասնակցում է անչափահաս սովորողի մասնակցությամբ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններին, եթե օրենքով նախատեսված է մանկավարժի մասնակցության պահանջ:

2. Ուսուցչի օգնականի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները՝

1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.
ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը,

բ. առարկայական չափորոշիչները, ծրագրերը և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նախարարության համապատասխան նորմատիվ իրավական ակտերը,

գ. մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, մինչբժշկական օգնության հիմունքները,

2) աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

3. Որակավորման պահանջները՝

1) ուսուցչի օգնականի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մանկավարժական կրթություն կամ

բարձրագույն կրթություն, և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ,

2) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի պաշտոնը կարող է զբաղեցնել սույն պաշտոնի որակավորման պահանջները բավարարող և տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցչի պաշտոնում չաշխատող անձը:

Հավելված 2

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Աշխատանքի ուղղություններ	Իրականացվող գործողություններ	Կատարման ժամկետ
Նախապատ-րաստական աշխատանքներ և պլանավորում	Նոր ուսումնական տարվա անելիքների պլանավորում՝ աշխատանքային պլանի և ժամանակացույցի կազմում:	Սեպտեմբերի 1-15
	Աջակցություն ուսուցչին դասարանում իրականացվող աշխատանքների պլանավորման և դասի թեմային համապատասխան ռեսուրսների ընտրության, անհրաժեշտ նյութերի պատրաստման գործընթացում:	Ուսումնական տարվա ընթացքում
Դիտարկում	Կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտմանն ուղղված դիտարկումներ առաջին, հինգերորդ, տասներորդ դասարաններում:	Սեպտեմբերի 1-15
	Այլ հաստատությունից տեղափոխված աշակերտների դիտարկում՝ կրթական նոր միջավայրին հարմարվելու կարողությունների և դժվարությունների բացահայտման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Սովորողների ուսուցման գործընթացին նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնների, ուսումնառության դժվարությունների, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտմանն ուղղված դիտարկումներ:	Ուսումնական տարվա ընթացքում
	Դասերի ժամանակ աշակերտների վարքի և մասնակցության դիտարկում՝ ըստ	Ուսումնական տարվա

	անհրաժեշտության առանձին ուղորդումներ տրամադրելու և դասապրոցեսին առավելագույնս ներգրավվածություն ապահովելու նպատակով:	ընթացքում
Ուսուցման գործընթաց	Աջակցություն ուսուցիչներին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների ու ծրագրերի համապատասխան սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորման գործընթացում:	Ուսումնական տարվա ընթացքում
	Սովորողների ուսումնառության գործընթացում արձանագրված դժվարությունների, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների հաղթահարմանն ուղղված անհատական և խմբային աշխատանքներ:	Ուսումնական տարվա ընթացքում
	Հանդիպումներ դասավանդող ուսուցիչների հետ՝ սովորողի դժվարությունների քննարկման և համատեղ աշխատանքային պլանավորման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Ուսումնամեթոդական նյութերի մշակում, պատրաստում, թարմացում:	Ուսումնական տարվա ընթացքում
Անհատական ուսուցման պլանավորման գործընթաց	Սովորողի կրթական գործընթացում մինչ այժմ կիրառված արդյունավետ ռազմավարությունների և առաջացած դժվարությունների մասին տեղեկատվության տրամադրում՝ ԱՈՒՊ-ի մշակման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում
	Մասնակցություն սովորողի ԱՈՒՊ-ի ընթացիկ, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման աշխատանքներին:	Ուսումնական տարվա ընթացքում
Միջոցառումներ	Արտադասարանական և արտադպրոցական տարաբնույթ միջոցառումների	Ուսումնական տարվա

	կազմակերպման և իրականացման աշխատանքներ:	ընթացքում
Ծնողական հանդիպումներ	Հանդիպումներ սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման, ընտանեկան դաստիարակության հարցերում աջակցության տրամադրման, իրազեկման նպատակով:	Ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշ-տության
Հաշվետվու-թյուններ	Իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետությունների կազմում:	Կիսամյակի ավարտին, տարեվերջին՝ հաստատութ-յան կանոնա-դրության համաձայն
Այլ աշխատանքներ	Ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված այլ աշխատանքներ:	Ուսումնական տարվա ընթացքում

Հավելված 3

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ					
Ուսուցչի օգնական՝					
Սովորողների ընդհանուր թիվ՝					
ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվ՝					
Սովորելու հետ կապված դժվարություն ունեցող սովորողների թիվ՝					
Տնային ուսուցում ստացող սովորողների թիվ՝					
Հեռավար կրթություն ստացող սովորողների թիվ՝					
N⁰	**Գործունեության բնագավառներ**	**Աշխատանքի հիմնական ուղղություններ**			
1.	**Աջակցություն սովորողներին**	**Իրականացվող գործողություններ***	**Դասարան/ սովորող**	**Համագոր-ծակցություն**	**Կատարման ժամկետ**
1.1	Աջակցություն սովորողների ուսումնառությանը դասի ընթացքում՝ դիտարկում, համատեղ դասավանդում, վարքագծի կառավարում, ...):				
1.2	Աջակցություն սովորողներին դասերից հետո (ուսումնական գործընթացում սովորողների կողմից ձեռքբերված գիտելիքների ամրապնդում):				
1.3	Աջակցություն ԿԱՊԿ ունեցող սովորողներին:				

* Իրականացվող գործողություններն ընտրվում են ուսումնական հաստատության ուսուցչի օգնականի տարեկան ծրագրին համապատասխան

2.	**Աջակցություն ուսուցչին**	**Իրականացվող գործողություններ***	**Դասարան/ ուսուցիչ**	**Համագոր-ծակցություն**	**Կատարման ժամկետ**
2.1	Դիտարկում (սովորողների խնդիրների, առաջընթացի, ձեռքբերումների մասին տեղեկատվության հավաքագրում):				
2.2	Աջակցություն ուսումնական ծրագրի իրականացմանը (դասի պլանավորում, ուսումնական նյութերի պարզեցում, օժանդակ և դիդակտիկ նյութերի պատրաստում և այլն):				
2.3	Աջակցություն Կանխարգելիչ միջամտությունների պլանի, ԱՈԻՊ-ի մշակման աշխատանքներին:				
3.	**Աջակցություն դպրոցին**	**Իրականացվող գործողություններ***	**Խորհրդատ-վություն ստացող անձ**	**Համագոր-ծակցություն**	**Կատարման ժամկետ**
3.1	Խորհրդատվական և տեղեկատվական աշխատանքներ				
3.2	Փորձի փոխանակում				

Հավելված 4

Ուսուցչի և ուսուցչի օգնականի համատեղ աշխատանքի ուղեցույց

(աջակցություն դասապրոցեսին[12])

Ամսաթիվ_____

Առարկա		Թեմա	
Ուսուցիչ		Ուս.տարի/ դասարան	
Կրթական վերջնարդյունքներ			
Դասի սկզբում, խնդրում եմ...			
Խնդրում եմ այս սովորողներին տալ հետևյալ հիմնական հարցերը.		Սովորող	Դասի փուլ
Հիմնական գործունեությունը			
Խնդրում եմ աշխատել այս սովորողի/ սովորողների խմբի հետ, քանի որ նրանք ունեն աջակցության կարիք:		• • •	
Խնդրում եմ տալ հետադարձ կապ հետևյալ սովորողներին	Հետևյալ կետերի շուրջ.		
Դասի վերջում, խնդրում եմ... Մեր հաջորդ քայլն է...			

[12] Տվյալ ձևաթուղթը կուղղորդի ուսուցչին առանձնացնել այն բոլոր գործողությունները, որոնց դեպքում ինքը կունենա ուսուցչի օգնականի աջակցության կարիքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադամյան Հ.Ա., Մարգարյան Լ.Հ., Մանկավարժահոգեբանական գնահատման և աջակցության գործընթացների կազմակերպումն աջակցության կենտրոններում, Ձեռնարկ, Երևան, 2019, 86 էջ
2. Առաքելյան Ս., Խառը տիպի ուսուցման դասընթացի նախագծման առանձնահատկությունները, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Մանկավարժություն և հասարակական գիտություններ: 2 (33) – Երևան, Լինգվա, 2015, 260 էջ, ՀՏԴ 378.175/371.397
3. Դավթյան Մ., Խաչատրյան Մ., Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Երևան, 2019
4. Դավթյան Ս.Ռ., Տեսողության խանգարում ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորման և զարգացման միջոցներն ընտանիքում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Նահապետ» հրատարակչություն, 2018, 47 էջ
5. Ենոքյան Տ.Վ., Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված մեթոդների և միջոցների կարևորությունը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, §Գիտական տեղեկագիր, № 1-2 (34-35), Երևան, 2018, 159 էջ
6. Զադոյան Ա.Մ., Մանկավարժական խորհրդատվությունը որպես ուսուցչի օգնականի գործառույթների իրականացման գիտամեթոդական ուղեցույց: Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, 2019, ՀՏԴ 036
7. Թադևոսյան Ս., «Անհատական ուսուցման պլանի մշակման» մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016, 41 էջ
8. Ասրյան Լ., Կատինյան Վ., Ադամյան Հ. և այլոք: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018, 48 էջ
9. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ - Եր., Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020, 74 էջ
10. Կատինյան Վ., Ասրյան Լ., Ադամյան Հ. և այլոք: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018, 120 էջ

11. Մուրադյան Ս.Վ., Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման զարգացումը շարժախաղերի միջոցով, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, 46 էջ
12. Պայլոզյան Ժ.Հ., Թադևոսյան Է.Ռ., Խոսքի հնչյունային թերզարգացման հաղթահարման առանձնահատկությունները, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 4, 2011
13. Սվաջյան Ա. Հ. , Ադամյան Հ. Ա. , Գարեգինյան Ա. Ա. , Մարգարյան Լ. Հ. , Հակոբյան Լ. Գ. , Քալաշյան Ա. Ա. , Գրիգորյան Լ. Կ. , Զաքարյան Լ. Կ. , Ներսիսյան Ա. Ռ. , Հարությունյան Գ. Հ. , Մուրադյան Ռ. Մ. , Բաղդասարյան Հ. Վ. , Մարգարյան Հ. Վ. : Ինչպես խթանել ներառումը դասարանում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Եր. : Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. , 2020, 235 էջ
14. Տիքա, Ռ., Էբերի, Բ., Ջոնսթոն, Ք., Պողոսյան, Ա. և Հանթ, Փ. (Խմբ.) (2018) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ
15. Гарднер Г. Структура разума. Теория множественного интеллекта. Вильямс, 2007.-512с
16. Гилевич И.М., Забара Е.А., Ипполитова М.В. и др. (1997). Дети с отклонениями в развитиии: Методич. пособие./сост. Шматко Н.Д. - М.: изд. центр «Аквариум»,. 1997.- 128 с.
17. Королева И.В, Янн П. Дети с нарушениями слуха: книга для родителей и педагогов. СПб. КАРО, 2011.- 223 с.
18. Манукян А.В. Характеристика рекомендованной системы игр, игровых упражнений и заданий для развития речи у дошкольников с нарушением слуха /Специальная педагогика и психология. (Сборник научно-методических статей) – Ер., 2009 - Зангак-97,
19. Назарова Н.М. Причины и последствия нарушения зрения и способы компенсации/Специальная педагогика– М. 2005
20. Трошин П. Л. Интеллект и его виды. Нарушение интеллекта: г. Шуя - 2015
21. Ahuja, A., Ainscow, M., Bouya-Aka Blet, A., Cruz, M., Eklindh, K., Ferreira, W., Halperin, R., Heijnen, H., Thu Huong, N., Keynan, H., Lee, S., Shiu-Kee, C., Meisfjord, R., Perner, D., Riddell, A., Shaeffer, Sh., Skinner, N., Taut, S., Van den Brule-Balescut, J., Wabuge Mwangi, R., Williams, J., Wormnæs S., Price, P., Guidelines for inclusion: ensuring access to education for all, 2004, 37p.
22. Basso D., McCoy N. (2007) The Co-Teaching Manual, Twins Publications

23. Bentham S.(2006). A Teaching Assistant's Guide to Managing Behaviour in the Classroom, Published September 29, 112 Pages
24. Clarke, E., and Visser J., (2016) "Teaching Assistants Managing Behaviour – Who Knows How They Do It? A Review of Literature." Support for Learning 31 (4): 266–280. doi:10.1111/1467-9604.12137. [Crossref], [Web of Science ®], [Google Scholar]
25. Conderman, G., (2011), Middle School Co-Teaching: Effective Practices and Student Reflections
26. Giangreco, M.F., & Doyle, M.B., (2007). Teacher assistants in inclusive schools. In L. Florian (Ed.), The SAGE handbook of special education (pp. 429-439). London: Sage.
27. Giangreco, M.F., Doyle, M.B., "Teacher Assistants in Inclusive Schools." SAGE Handbook of Special Education, edited by Lani Florian. London: Sage, 2007.
28. Giangreco, M.F., Edelman, S.W., Broer, S.M., and Doyle, M.B., "Paraprofessional Support of Students with Disabilities: Literature from the Past Decade." Exceptional Children 68, no. 1 (2001)
29. Hadwin, A., Wilcox, S., A Handbook for Teaching Assistants (2000). Instructional Development Centre Queen's University, Kingston, Ontario, K7L 3N6
30. Kingsley, J. (2008). Quick, Easy & Effective Behaviour Management Ideas for the Classroom, Publishers; Illustrated edition (November 15)
31. Lacey, P. (2001). 'The role of learning support assistants in the inclusive learning of pupils with severe and profound learning difficulties', Educational Review, 53(2): 157–167.
32. MacDougall, M. (2017). Successful Co-Teaching: A Handbook for Educators, Faculty of Education, Brock University St. Catharines, Ontario
33. Nova Scotia, (2009). Teacher Assistant Guidelines. Prepared by the Department of Education 978-1-55457-319-6
34. Sharma, U., & Salend, S. J. (2016). Teaching Assistants in Inclusive Classrooms: A Systematic Analysis of the International Research. Australian Journal of Teacher Education, 41(8).
35. Sharples, J., Webster, R., Blatchford, P., (2015). Making Best Use of Teaching Assistants: Guidance report. Educational Endowment Foundation: Report – March 2015, 20 pp
36. Shumway, L.K. (2011) Co-teaching handbook, Ed.D. State Superintendent of Public Instruction
37. Takala, M. (2007) The work of classroom assistants in special and mainstream education in Finland

38. Tatum, E. (2017), Teacher-teacher aide teaming: Investigating collaboration using cogenerative dialoguing and CHAT
39. Teaching Children with Disabilities in Inclusive Settings. Bangkok: UNESCO Bangkok, 2009. 109 pp
40. Thomas, G. (1992) Effective classroom teamwork: support or intrusion. London: Routledge.
41. Tobin, R. (2006). Five ways to facilitate the teacher assistant's work in the classroom. TEACHING Exceptional Children Plus, 2(6) Article 4. Retrieved [date]
42. UNESCO World Declaration on Education For All 1990, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000127583
43. Van Riper, C. & Ericson, R.L., Speech Correction: An Introduction to Speech Pathology and Audiology, Boston, 1996.
44. Wyly, C. (2018) Co-Teaching Guidelines Texas Education Agency / Education Service Center

Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա., Մարգարյան Լ.Հ., Հակոբյան Լ.Գ., Գրիգորյան Լ.Կ., Մուրադյան Ռ.Մ., Հարությունյան Գ.Հ., Զաքարյան Լ.Կ., Ներսիսյան Ա.Ռ., Քալաշյան Ա.Ա.

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՁԵՌՆԱՐԿ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուսուցչի օգնականների համար

Տառատեսակը՝ GHEA Grapalat, տառաչափը 12: Չափսը՝ 21,0 x 29,7:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 1500:
Տպագրված է «էդիթ Պրինտ» հրատարակչությունում, Երևան, Դ. Մալյանի փողոց 43